Կորպորատիվ իրավահարաբերություններում հանդես եկող սուբյեկտների վարքագծին ճիշտ իրավական գնահատական տալու անհրաժեշտությունը դարձել է առավել արդիական, քան երբևէ, ինչը պայմանավորված է ներկայումս կորպորատիվ կառավարման մշակույթի արագ զարգացմամբ և համաշխարհային տնտեսական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումներով: Ընդ որում, դատական պրակտիկայի վերլուծությունը ևս վկայում է՝ կորպորատիվ բնույթի վեճերի, այդ թվում կորպորատիվ կառավարման մարմինների կողմից անբարեխիղճ վարքագիծ դրսևորելուն իրավական ճիշտ որակում տալու անհրաժեշտության մասին:

Բանալի բառեր– իրավաբանական անձ; բարեխղճություն; անբարեխիղճ վարքագիծ; բարեխիղճ գործել; կորպորատիվ կառավարում; կորպորատիվ իրավահարաբերություններ; կորպորատիվ իրավունք:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում ակտիվ զարգացման նոր փուլ են մտել կորպորատիվ բնույթի իրավահարաբերությունները, ակնհայտորեն փոփոխվել է ներդրողների վերաբերմունքը կորպորատիվ կառավարման մոդելների ընտրության հարցում, ինչպես նաև օրենսդրի կողմից կատարվում են օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված ոլորտի լավարկմանը:

Սույն հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավակարգավորումների համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում բացահայտել քաղաքացիաիրավական հարաբերություններում առկա բարեխղճության սկզբունքի և կորպորատիվ բարեխղճության սկզբունքի տարբերությունները, ինչպես նաև կորպորատիվ բարեխղճության սկզբունքը բնութագրող չափանիշները:

Նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել «բարեխղճություն» եզրույթի ձևավորման և զարգացման պատմությունը,
- բացահայտել կորպորատիվ իրավահարաբերություններում «բարեխղճության» սկզբունքի էությունը և դրա առանձնահատկությունները,
- բացահայտել ՀՀ դատական պրակտիկայում բարեխղճության սկզբունքի գնահատման առանձնահատկությունները,
- վեր հանել կորպորատիվ հարաբերություններում բարեխղճության սկզբունքի այն առանձնահատկությունները, որոնցով վերջինս տարբերվում է քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճության սկզբունքից:

Աշխատանքում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ անալիզ, սինթեզ, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդները:

2. Բարեխղճության սկզբունքը կորպորատիվ իրավահարաբերություններում

Բարեխղճությունն առաջին հերթին մարդու վարքագիծը բնորոշող հատկանիշ է, քանի որ դրանով կարելի է որակել անձի իրավունքների և պարտականությունների իրացման գործընթացը: Որպես մարդու վարքագիծը բնորոշող հատկանիշ՝ բարեխղճությունը ենթադրում է, որ անձը պետք է ազնվորեն մոտենա իր իրավունքների իրացման և պարտականությունների կատարման գործընթացին՝ գործելով արդարացի:

Բարեխղճությունն առանցքային դեր ունի ինչպես անձնային, այնպես էլ իրավական հարաբերություններում, առնվազն այն հիմնավորմամբ, որ բարեխիղճ վարքագիծը այն գործոնն է, որը նպաստում է երկարաժամկետ և կայուն հարաբերությունների ձևավորմանը:

«Բարեխիղճ» բառը հայ լեզվաբանների կողմից բացատրվել է հետևյալ կերպ՝ ««իր պարտականությունները ազնվորեն և պարտաճանաչ կատարող», «ջանասեր, ուշիմ», «արդարամիտ, ազնիվ, արդարադատ» և «խղճով՝ պատվով՝ ուշադրությամբ կատարված, մաքուր»»¹:

Բարեխղճության սկզբունքը որպես իրավական կատեգորիա կիրառվել է դեռևս հռոմեական իրավունքում պրետորների (praetor, praeitor) կողմից: Մասնավորապես, պրետորներն այս կամ այն հայցը սահմանելու միջոցով քաղաքացիական իրավունքը համապատասխանեցնում էին հռոմեական հասարակությունում առաջացող նոր իրավահարաբերությունների պահանջներին: Դրանց շարքին են դասվել այն հայցերը, որոնցով որոշումները կայացնելիս դատարանը պետք է առաջնորդվեր ազնվության և արդարության սկզբունքով (actiones bonae fidei)²:

Առանձին դեպքերում բարեխղճությունը որպես սկզբունք ամրագրված է նաև տարբեր երկրների օրենսդրությամբ (օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքում 2012 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում³ բարեխիղճ գործելու պարտականությունը դասվել է քաղաքացիական իրավունքներն իրականացնելու սահմանները կարգավորող սկզբունքների շարքին): ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգրք)⁴ և այլ նորմատիվ իրավական ակտերով բարեխղճության սկզբունքն ուղղակիորեն իր ամրագրումը չի

¹ Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976: Հատոր 1, էջ 174:

² Ավետիսյան Վ.Ռ., «Հռոմեական մասնավոր իրավունք», Եր., Հեղինակային հրատ., 2015 թ. էջ 215:

³ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/62129e15ab0e6008725f43d63284aef0bb12c2cf/# (էլեկտրոնային հասանելիությունը 08.10.2024 թվականի դրությամբ)

⁴ ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

ստացել որպես քաղաքացիաիրավական հարաբերությունների հիմնարար սկզբունք, այլ գործածվել է տարբեր իրավահարաբերություններ կարգավորող իրավադրույթներում, օրինակ՝ կորպորացիայի կառավարման մարմինների բարեխիղճ գործելու պարտականության վերաբերյալ կարգավորում է նախատեսված Օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«3. Անձը, որն օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխիղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի: Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ԲՕ)¹ 90-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Խորհրդի անդամները, Ընկերության տնօրենը (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրինության անդամները, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպությունը և կառավարիչն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով, (...)»:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)² 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ընկերության խորհրդի անդամները, գործադիր մարմինն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են գործել ի շահ ընկերության՝ բարեխիղճորեն և ողջամիտ»:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է, որ, ի լրումն այլ պայմանների, օրենսդրի կողմից սահմանվել է կորպորացիայի կառավարման մարմինների իրավունքների իրացման և պարտականությունների կատարման երկու պայման՝ բարեխիղճություն և ողջամտություն, որոնք չպահպանելը հանգեցնում է կորպորացիայի մասնակիցների պահանջով կորպորացիային պատճառված վնասի փոխհատուցման պարտականության ծագմանը:

Ուստի կորպորատիվ կառավարման մարմինները պարտավոր են գործել բարեխիղճ, ի շահ կորպորացիայի և կորպորատիվ կառավարման սկզբունքներին համապատասխան, այլապես նման վարքագիծը անխուսափելիորեն հանգեցնելու է պատասխանատվության:

ՀՀ Կառավարությունը կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառությունը խրախուսելու և կորպորատիվ կառավարման մարմինների վարքագծին ճիշտ որակում տալու նպատակով այդ իրականացվող ծրագրերի առաջխաղացմանն աջակցելուն ուղղված գործուն քայլեր է ձեռնարկել դեռևս 2010 թվականից, իսկ բոլորովին վերջերս Օրենսգրքում Էկանոմիկայի նախարարության առաջարկությամբ կատարվել են փոփոխություններ, մասնավորապես 2024 թվականի մայիսի 22-ին ընդունվել է, իսկ 2024 թվականի հունիսի 8-ից ուժի մեջ է մտել Օրենսգրքում կատարված լրացումը՝ 76.1 հոդվածը՝ «Կորպորատիվ կառավարման կանոնագիրք» վերտառությամբ³:

¹ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831:

² ՀՀՊՏ 2001.12.07/38(170) Հոդ.910:

³ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենք; ՀՕ-237-Ն

Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ձևի, ներդրման, կիրարկման և այլ առանձնահատկությունների վերաբերյալ խիստ օգտակար աղբյուր է նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հրապարակված G20/OECD կորպորատիվ կառավարման սկզբունքները:

Ընդ որում, համապատասխան փաստաթղթում ևս կիրառվել է «բարեխիղճ» եզրույթը մի քանի ֆորմատներով, մասնավորապես այն գերազանցապես կիրառվել է հետևյալ համատեքստում՝ «սկզբունքները կօգնեն հասցեագրել ինստիտուցիոնալ ներդրողների աճող դերը՝ խթանելով բարեխիղճ կառավարման կանոնագրքերի առաջխաղացումը և այնպիսի խորհրդատվական ծառայությունների կողմից շահերի բախման բացահայտումը, ինչպիսիք են վստահված խորհրդատուները և բնապահպանական, սոցիալական ու կառավարման ինդեքսները տրամադրողները: Սկզբունքները ներառում են նաև կորպորատիվ պարտքի աճող կարևորությունը և կապիտալի շուկաներում պարտատոմսերի սեփականատերերի դերն արտացոլող նոր առաջարկություններ»¹:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ կորպորատիվ կառավարման սկզբունքները, ի լրումն այլ գործառնությունների, ուղղված են ապահովելու բարեխիղճ կառավարման կանոնագրքերի առաջ գալուն:

Բարեխիղճ կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման գաղափարն այն է, որ կորպորացիաների կառավարման մարմինների գործողությունները, անգործությունը և այլ վարքագիծ պետք է ուղղված լինեն կորպորացիայի լավագույն շահին և հիմնված լինեն Կորպորացիայի արժեքների վրա:

Ըստ Վ. Դ. Ավետիսյանի՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության սկզբունքները կառուցված են չորս հիմնական արժեքների վրա՝

«Արդարություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է պաշտպանի բաժնետերերի իրավունքները և ապահովի հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի, այդ թվում փոքրամասնություն կազմող և օտարերկրացի բաժնետերերի նկատմամբ: Բոլոր բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան արդյունավետորեն վերականգնելու իրենց խախտված իրավունքները:

Պատասխանատվություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ճանաչի շահառու անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները և խրախուսի ընկերությունների և շահառուների ակտիվ համագործակցությունը՝ ուղղված հասարակության բարեկեցության աճին, աշխատատեղերի ստեղծմանը և ֆինանսապես առողջ ընկերությունների կայունությանը:

Թափանցիկություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է ապահովի բոլոր այն էական փաստերի ժամանակին և ճշգրիտ բացահայտումը, որոնք վերաբերում են ընկերությանը, ներառյալ ընկերության ֆինանսական վիճակին, գործունեության արդյունքներին, սեփականության կառուցվածքային և կառավարմանը:

Հաշվետվողականություն. կորպորատիվ կառավարման համակարգը պետք է լինի ռազմավարական ուղեցույց՝ խորհրդի կողմից ընկերության կառավարման, գործադիր մարմնի գործունեության արդյունավետ վերահսկման, ինչպես նաև ընկերության և նրա բաժնետերերի առջև խորհրդի հաշվետվողականության ապահովման համար»²:

¹ https://www.oecd-ilibrary.org/governance/g20-2023_7b5dcccce-hy (էլեկտրոնային հասանելիությունը 10.10.2024 թվականի դրությամբ):

² **Ավետիսյան Վ.Դ.** Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), դոկտորականատենախոսություն. ԵՊՀ իրատարակչություն, Երևան 2013, էջ 282-283:

Մեր կարծիքով՝ վերոնշյալ չորս հիմնական արժեքները սերտորեն կապված են բարեխղճության հետ, քանի որ բարեխղճությունը կորպորատիվ կառավարման բաղկացուցիչ մաս կազմող տարրերից մեկն է: Ստորև առանձին կանդադառնանք վկայակոչված չորս հատկանիշների և բարեխղճության միջև կապին:

Արդարություն և բարեխղճություն. Կորպորատիվ կառավարման սկզբունքներից կարևորագույնը ընկերության կառավարման գործընթացների ընթացքում արդար գործելն է: Այսինքն՝ գործընթացները պետք է կատարվեն այնպես, որպեսզի դրանց ընթացքում չխախտվեն ինչպես կորպորացիայի սուբյեկտների, այնպես էլ կորպորացիայի հետ համագործակցող սուբյեկտների շահերը: Բարեխղճությունը ևս ենթադրում է անկեղծություն, ազնվություն ու պատասխանատվություն թե՛ կազմակերպության ներսում, թե՛ դրա արտաքին հարաբերություններում: Ուստի այդ երկուսը միմյանցից անբաժանելի են, քանի որ մի շարք դեպքերում բարեխղճ վարքագծի խախտում կհամարվի, եթե չապահովվի բոլոր կողմերի նկատմամբ արդար և հավասար վերաբերմունք: Միաժամանակ, **բարեխղճություն** նշանակում է, որ կառավարման մարմինները պետք է արդարացի ու պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերեն իրենց վարքագծի ընթացքում՝ առանց կողմնակալության կամ չարաշահման, իսկ արդարությունը, այս տեսանկյունից, ապահովում է, որ նման վարքագծի արդյունքում չլինի շահերի բախում կամ ոչ արդար վարքագիծ, որը խախտի այլ անձանց և/կամ կորպորացիայի շահերը:

Պատասխանատվություն և բարեխղճություն. այս երկու սկզբունքները միմյանց հետ կապված են, բարեխղճ վարքագիծը ենթադրում է պատասխանատվություն և հակառակը: Կորպորատիվ կառավարման մեջ դրանց համակցությունը ապահովում է վստահություն, թափանցիկություն և կայունություն: Դրա շնորհիվ հնարավոր է հասնել ինչպես կորպորացիայի կառավարման արդյունավետության ավելի բարձրացմանը, այնպես էլ կորպորացիայի նկատմամբ այլ սուբյեկտների վստահության բարձրացմանը, որը երկարաժամկետ նպատակների իրագործման հիմնական գրավական է:

Թափանցիկություն և բարեխղճություն. թափանցիկությունը և բարեխղճությունը անբաժանելի են, քանի որ առաջինը ապահովում է տեղեկատվության հասանելիությունը, իսկ երկրորդը՝ այդ տեղեկատվության արդարացի ներկայացումը: Նշվածը շատ կարևոր դեր ունի կորպորատիվ կառավարման համակարգում, քանի որ արդարացի և պարտաճանաչ կերպով տեղեկատվության հրապարակումը կարևոր է ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների, այլ նաև կառավարման ընդհանուր գործընթացների համար: Այս սկզբունքները ևս միասին ուղղակիորեն խթանում են կորպորացիայի նկատմամբ վստահության աճը:

Հաշվետվողականություն և բարեխղճություն. այս երկու արժեքները ևս անբաժանելի են և կիրառվում են նաև միասին, քանի որ հաշվետվողականությունը ենթադրում է, որ կորպորացիան և դրա կառավարման մարմինները պետք է լինեն հաշվետու շահագրգիռ անձանց մոտ, իսկ հաշվետու լինելը արդեն իսկ ենթադրում է բարեխղճ վարքագիծ, քանի որ գործել առանց այլոց իրավունքները և օրինական շահերը հաշվի առնելու և խուսափել դրա արդյունքում վրա հասնող պատասխանատվությունից, ուղղակիորեն վկայում է անբարեխղճ վարքագծի մասին:

Հաշվի առնելով ողջ վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է բացահայտել «բարեխղճություն» եզրույթի իմաստը:

«Բարեխղճություն» եզրույթը առանձին չի բացահայտվել օրենսդրի կողմից, այն գնահատողական կատեգորիա է: Ընդ որում, որոշ իրավաբան գիտնականների կարծիքով՝ բարեխղճություն եզրույթին սահմանում տալը անհնար է, և նման փորձ անելու դեպքում այն կկորցնի իր էությունը:

Ըստ անգլիացի գիտնական Մ. Մ. Բրիջի՝ «բարեխղճությունը անգլիական դատական համակարգում կիրառվում է որպես էթիկական պայման (terms implied in fact), որը քողարկվում է պայմանագրային և իրավական տարբեր ձևակերպումների

մեջ, սակայն պարբերաբար այդ սկզբունքի կիսման արդյունքում այն ներդրվել է որպես կիրառելի սկզբունք (terms implied in law)»¹

Այլ անգլիացի տեսաբաններ կարծում են, որ «բացակայում է անհրաժեշտությունը՝ «բարեխղճության» սկզբունքի սահմանումը, որպես անգլիական պայմանագրային իրավունքի հիմնարար սկզբունք, քանի որ, ըստ նրանց, Անգլիայի օրենսդրությունը ունի բավարար արդյունավետ իրավական կառուցակարգեր, որոնք հնարավորություն են տալիս վեճը լուծել առանց բարեխղճության սկզբունքի օգտագործման: Ըստ նրանց՝ այդ սկզբունքի սահմանումը կլինի անորոշ, ինչն էլ կհանգեցնի իրավակիրառ պրակտիկայում անորոշության»²:

S. Կ. Բարսեղյանը իր աշխատություններից մեկում նշել է. «Գիտական գրականությունում «բարեխղճ» կատեգորիան, որպես կանոն, հիշատակվում է իրավունքների չարաշահման դեպքում կամ բարեխղճ ծեռք բերողից գույքը հետ պահանջելիս, մինչդեռ՝ բարեխղճությունը սկզբունք չհամարելն ամենևին էլ չի նշանակում, որ օրենսդիրը չի արժևորում քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների բարեխղճության հիմնարար նշանակությունը: Վերջինս գտնում է, որ բարեխղճությունն ավելի քան սկզբունք է: Այն իրավական արժևորվածություն ունեցող բարոյաէթիկական արժեք է՝ բարոյական հրամայական, որն ընկած է իրավունքի և դրա ցանկացած սկզբունքի հիմքում: Եթե սկզբունքները (մարդկանց որոշմամբ) կարող են փոփոխվել, ապա բարեխղճությունն անփոփոխ կատեգորիա է, նրա կոնկրետ ըմբռնումը կախված է այն բանից, թե ինչպիսի կանոններ, սովորություններ և բարքեր են ձևավորվել տվյալ հասարակությունում: Բարեխղճությունն իրավակարգավորման ելակետային և հիմնարար այն կատեգորիաներից մեկն է, որի պահանջներին պետք է համապատասխանի քաղաքացիական ցանկացած իրավահարաբերություն, սուբյեկտի ցանկացած գործողություն»³:

Այսպես, ըստ Կ.Ի. Սկլովսկի՝ «bona fides (բարեխղճությունը) իրավահարաբերություններում ակնկալվող/ստանդարտ վարքն է, որը որակվում է որպես զգուշավոր վարքագիծ»⁴: Իր մեկ այլ աշխատությունում Կ.Ի. Սկլովսկին հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Բարեխղճությունը՝ որպես իրավական սկզբունք իրավահարաբերություններում ֆորմալ հավասարության և համաչափության իրավական սկզբունքի արդյունք է, որը ենթադրում է, որ իրավահարաբերությունների մասնակիցները պետք է գործեն ազնվությամբ՝ հարգելով միմյանց իրավունքները և շահերը: Այն նաև ընդգծում է կողմերի ակտիվ ներգրավվածությունը իրավական նորմերի ու սկզբունքների ձևավորման և պահպանման գործում, ինչի միջոցով իրավահարաբերություններում ապահովվում են արդարությունը և հավասարակշռությունը»⁵:

Ըստ Ա. Ա. Չուկրենի՝ «բարեխղճության սկզբունքը քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների իրականացման ընթացքում, այլ անձանց իրավունքները և օրինական շահերը խախտմանը չհանգեցնելուն ուղղված հետևողական վարքագիծն է, որը դրսևորվում է տվյալ անձի կողմից իր գործու-

¹ Bridge M. G. Does Anglo-Canadian Contract Law Need a Doctrine of Good Faith? Canadian Business Law Journal. 1984. Vol. 9. էջ 385

² McKendrick E. Contract Law. 12th ed. Palgrave Law Masters. Palgrave Macmillan, 2017. էջ 142, 159

³ S. Կ. Բարսեղյան, Բարեխղճության դերը քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման գործում, հոդված, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության 20-ամյակին, ԵՊՀ, Երևան 2012, էջ 32-35:

⁴ Скловский К.И. Проблемы собственности и владения в гражданском праве России. М.: Дело, 1999. էջ. 205.

⁵ Скловский К.И. Собственность в гражданском праве. М.: Статут, 2008. էջ 768.

նեության հնարավոր բացասական հետևանքները կանխատեսելու և կանխարգելելու գործողությունների կատարմամբ և/կամ անգործության դրսևորմամբ»¹:

Վերոգրյալի վերլուծությունից բխում է, որ բարեխղճությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների հիմնարար սկզբունքներից է և ունի իր ուրույն տեղը:

Բարեխղճության սկզբունքը ունի որոշակի կանխարգելիչ դեր, քանի որ այն ապահովում է քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների արդար, ազնիվ և հավասար վարքագիծ, ինչպես նաև փոխադարձ հարգանք: Սուբյեկտները, հասկանալով այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը և այդ իրավունքների խախտման դեպքում հնարավոր պատասխանատվությունը, իրենց վարքագիծը դրսևորելու ընթացքում փորձում են կանխել նման հնարավոր դեպքերը:

Ուստի, բարեխղճության սկզբունքը, կարելի է ասել, ոչ միայն պարտադրում է, որ սուբյեկտները հետևողական վարքագիծ դրսևորեն իրենց իրավունքները իրացնելու ընթացքում, այլ նաև հաշվի առնեն տվյալ իրավահարաբերություններում մյուս կողմում հանդես եկող սուբյեկտի իրավունքները և օրինական շահերը, որն էլ կրկին հիմնավորում է, որ բարեխղճության սկզբունքը առանցքային դեր ունի քաղաքացիաիրավական հարաբերություններում՝ անկախ դրան օրենսդրորեն հստակ սահմանում տրված չլինելու փաստի:

Նման պայմաններում կարող ենք պնդել, որ բարեխղճության սկզբունքը անուղղակի կերպով ընդհանուր չափանիշ է, որի ուժով քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտները դրսևորում են ազնիվ, սոցիալապես ընդունելի և ընկալելի վարքագիծ:

Սեզ համար ընդունելի է այն մոտեցումը, որ բարեխղճության սկզբունքը չպետք է ունենա հստակ սահմանում և պետք է լինի գնահատողական կատեգորիա, քանի որ բարեխիղճ վարքագիծը քաղաքացիաիրավական հարաբերություններում գնահատելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել սուբյեկտիվ և բարոյական բազմաթիվ տարրեր, որոնք տարբեր անձանց կողմից այլ կերպ են ընկալվում, և հաշվի առնելով այն, որ բարեխղճությունն ըստ էության այս կոնտեքստում կապված է ոչ միայն իրավական, այլ նաև բարոյական նորմերի հետ, ապա հստակ սահմանում տալը խիստ կսամանափակի արդարադատություն իրականացնող սուբյեկտին՝ փաստական հանգամանքները բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտություն իրականացրած լինելու արդյունքում, վարքագծին իրավական ձիշտ գնահատական տալու համար:

Նշվածը հիմնավորվում է նրանով, որ բարեխղճության սկզբունքը ունի շատ տարբեր չափորոշիչներ՝ կախված նրանից, թե ինչ բնույթի իրավահարաբերություններ են, և ովքեր են իրավահարաբերության սուբյեկտները:

Ընդ որում, բարեխղճության սկզբունքը չի կարող նեղ մեկնաբանվել և կիրառվել միայն մեկ իրավունքի ճյուղում, քանի որ դրա իմաստը փոփոխվում է տարբեր ոլորտներում: Երբ մենք բարեխղճություն եզրույթը քննարկման առարկա դարձնենք կորպորատիվ հարաբերությունների համատեքստում, անկասկած պետք է բացահայտվի այն կորպորատիվ իրավահարաբերությունների բնորոշ չափորոշիչների հետ համադրության արդյունքում, որոնք եթե ոչ էապես, ապա մեծամասամբ տարբերվում են քաղաքացիաիրավական հարաբերություններում առկա չափորոշիչներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2024 թվականի օգոստոսի 8-ին թիվ ՏՂ/0574/02/21 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արձանագրել է հետևյալը. «Գործադիր մարմնի ղեկավարի գործողություններով (անգործությամբ) ընկերությանը

¹ Чукреев А.А. Добросовестность в системе принципов гражданского права // Журнал российского права. 2002. № 11. էջ 102-103.

պատճառված վնասը հատուցելու պահանջի իրավունքի ծագման մասին խոսք կարող է գնալ միայն այն իրավիճակներում, երբ գործով ապացուցվում է նաև, որ գործադիր մարմնի ղեկավարի վարքագիծը (գործողությունները կամ անգործությունը) եղել է ոչ իրավաչափ, այն է՝ ի թիվս այլնի՝ ոչ բարեխիղճ, ոչ ի շահ ընկերության կամ ոչ ողջամիտ: Այսինքն՝ գործադիր մարմնի ղեկավարի վարքագիծը ոչ իրավաչափ է համարվում ոչ միայն այն դեպքում, երբ նա ուղղակիորեն խախտել է օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված այս կամ այն պահանջը, այլ նաև այն դեպքերում, երբ նրա՝ որպես իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի վարքագիծը շեղվում է ողջամիտ, բարեխիղճ և ի շահ ընկերության գործելու պարտականություն ունեցող ղեկավարի վարքագծի՝ օրենքով սահմանված չափանիշներից: Ըստ էության, կարելի է փաստել, որ գործադիր մարմնի ղեկավարի վարքագծի անբարեխղճությունը պետք է համարել ապացուցված, մասնավորապես այն դեպքերում, երբ՝

1) իր անձնական և իրավաբանական անձի շահերի միջև բախման առկայության պայմաններում գործադիր մարմնի ղեկավարը գործել է իր անձնական շահերից ելնելով,

2) գործադիր մարմնի ղեկավարը գիտեր կամ օբյեկտիվորեն պետք է իմանար, որ իր գործողությունները (անգործությունը) կատարման պահին չեն բխում իրավաբանական անձի շահերից,

3) գործադիր մարմնի ղեկավարն իրավաբանական անձի մասնակիցներից թաքցրել է իր կատարած գործարքի մասին տեղեկությունները, չի ապահովել դրանց հաշվապահական ձևակերպումը և իր հաշվետվողականությունը կամ մասնակիցներին տրամադրել է գործարքի մասին կեղծ տեղեկություններ,

4) գործարքը կատարվել է առանց իրավաբանական անձի կառավարման մարմինների համապատասխան հաստատման (համաձայնության)¹:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ օրենսդրությունը և դատական պրակտիկան ևս զարգացել են այն ուղղությամբ, որ բարեխղճության սկզբունքին հստակ իրավական սահմանում տալու անհրաժեշտությունը բացակայել է՝ այն գնահատողական կատեգորիա համարելով: Նախկինում, մինչև վկայակոչված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը նման հստակ չափորոշիչների տարանջատում և գնահատման ենթակա պայմանների սահմանում չէր տրվել:

Նշված իրողությունը թույլ է տալիս արձանագրել կորպորատիվ իրավահարաբերությունների զարգացման ներկայիս փուլի մասին, ինչպես նաև այդ իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին:

3. Եզրակացություն

Այսպիսով, կորպորատիվ և քաղաքացիաիրավական իրավահարաբերություններում բարեխղճության սկզբունքը ունի որոշակի նմանություններ, սակայն, ինչպես նշեցինք, առկա են տարբերություններ, որոնք բխում են իրավունքի ճյուղերի առանձնահատկություններից:

Իրավահարաբերությունների բնույթից բխող առանձնահատկություններից կարող ենք առանձնացնել հետևյալները՝

1. Քաղաքացիաիրավական իրավահարաբերություններում բարեխղճությունը ընդհանուր սկզբունք է, և այդ սկզբունքը գործնականում ուղղված է ապահովվելու, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում կողմերը գործեն ազնիվ և չխախտեն այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ կարգավորումները հստակ ամրագրվել են օրենսդրի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և

¹ <https://www.cassationcourt.am/precedent/civil-cases-advanced-search> (էլեկտրոնային հասանելիությունը 09.10.2024 թվականի դրությամբ)

այլ նորմատիվ իրավական ակտերում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարեխղճություն եզրույթը օգտագործվում է պարտավորական իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերով, սեփականության իրավունքին առնչվող որոշ իրավահարաբերություններ կարգավորող իրավանորմերով և այլն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համալիր վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ բարեխղճությունը քաղաքացիաիրավական հարաբերություններում ավելի շատ վերաբերում է իրավունքների իրացման ընթացքում ազնիվ և արդար գործելուն, ինչպես նաև սուբյեկտի դիտավորությանը: Կորպորատիվ իրավահարաբերություններում բարեխղճությունը կապված է կորպորացիայի կառավարման մարմինների գործառույթների իրականացման հետ, որի գնահատման համար ոչ միայն պետք է քննարկման առարկա դարձվի պայմանագրային և այլ տեսակի պարտավորական իրավահարաբերություններում դրսևորված վարքագիծը, այլ նաև որպես չափանիշ պետք է վարքագծի գնահատման համար հիմք ընդունվի կորպորատիվ շահը: Ուստի, կորպորատիվ հարաբերություններում բարեխղճությունը քաղաքացիաիրավական բարեխղճությունից կառուցվածքային տարբերակող հատկանիշը այն է, որ կորպորացիայի կառավարման մարմինները իրենց իրավունքները իրացնելիս և պարտականությունները կատարելիս ոչ միայն պետք է գործեն՝ առաջնորդվելով համապատասխան իրավասությունը սահմանող իրավադրույթներով, այլ նաև պետք է գործեն ի շահ կորպորացիայի:

Նշվածը ավելի պատկերավոր ներկայացնելու համար ստորև քննարկման առարկա դարձնենք այս տարբերությունը օրինակների վրա:

Օրինակ 1՝ կնքվել է հետաձգող պայմանով գործարք, և պայմանի իրականացումը տեղի չի ունեցել տվյալ իրավահարաբերության կողմերից մեկի անբարեխիղճ վարքագծի պատճառով:

Օրինակ 2՝ կորպորացիայի անունից գործարքներ կնքելու իրավասություն ունեցող անձը կնքում է շահութաբեր գործարք ոչ լավ հեղինակություն ունեցող տնտեսավարող սուբյեկտի հետ:

Այսպես, օրինակ 1-ի դեպքում պարտավորական իրավահարաբերություններում պարտականություն ստանձնած անձի կողմից անբարեխիղճ վարքագիծ դրսևորելու արդյունքում խախտվել են մյուս կողմի իրավունքները, իսկ օրինակ 2-ի դեպքում գործարքներ կնքելու իրավասություն ունեցող անձը կատարել է իր պարտականությունները. կնքել է շահութաբեր գործարք, սակայն համապատասխան մարմինը վատ համբավ ունեցող ընկերության հետ գործարք կնքելուց առաջ պետք է պատշաճ քննարկման առարկա դարձներ դրա հետևանքները կորպորացիայի հետագա գործունեության վրա, որի չկատարումը որակվելու է անբարեխիղճ վարքագիծ:

2. Սոցիալական արդարության պատասխանատվության չափանիշները կարևոր տարրեր են ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված բարեխղճության, այլ նաև կորպորացիայի կառավարման մարմինների բարեխղճության համար: Քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճությունը դրսևորվում է և/կամ կարող է դրսևորվել գերազանցապես այնպիսի հարաբերություններում, որոնք հիմնականում ծագել են կողմերի փոխադարձ կամահայտնության արդյունքում, և համապատասխան քաղաքացիաիրավական հարաբերություններում անձինք միևնույն պարտավորության կողմեր են: Նման դեպքում բարեխղճությունն ուղղված է լինելու յուրաքանչյուրի իրավունքների պատշաճ իրացմանը և պարտականությունների պատշաճ կատարմանը, որի դեպքում անձը կանխում է ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու արդյունքում պատասխանատվության վրա հասնելու հանգամանքը: Կորպորատիվ բարեխղճությունը, սակայն, ավելի լայն ու բազմաշերտ հասկացություն է, քանի որ այն ենթադրում է ոչ միայն օրենքի հետևողական կատարում, այլ նաև կորպորացիայի, կորպորացիայի կառավարման

մարմինների, կորպորացիայի աշխատակիցների, կորպորացիայի գործընկերների և այլ անձանց հանդեպ սոցիալական և էթիկական պատասխանատվություն:

Այս տարբերությունը վերլուծենք նախորդ կետում բերված օրինակների հիման վրա.

այսպես, օրինակ 1-ի դեպքում կողմերը փոխադարձ համաձայնությամբ և Օրենսգրքով սահմանված կարգով մտել են քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ, որի հիմքով տվյալ իրավահարաբերությունների մի կողմի պարտականությունների խախտումը հանգեցնելու է մյուս կողմի մոտ խախտված իրավունքը վերականգնելու/պաշտպանելու իրավունքի ծագմանը: Օրինակ 2-ի դեպքում քաղաքացիաիրավական հարաբերությունները չեն ծագել փաստացի կորպորացիայի գործադիր մարմնի ղեկավարի և կորպորացիայի բաժնետիրոջ միջև, սակայն գործադիր մարմնի ղեկավարի անբարեխիղճ վարքագծի դեպքում կորպորացիայի բաժնետիրոջ մոտ ծագելու է վնասի փոխհատուցման իրավունք:

3. Քաղաքացիաիրավական հարաբերություններում բարեխղճությունը գնահատելիս առանցքային դեր ունի սուբյեկտի դրսևորած վարքագծի բարոյական և հասարակության կողմից ընկալելիության աստիճանը, իսկ կորպորացիայի կառավարման մարմինների կողմից բարեխիղճ վարքագիծը գնահատելիս առանցքային դեր ունի այն գնահատականը, թե որքան է վարքագիծը բխել կորպորացիայի շահերից:

Տարբերությունը կրկին քննարկման առարկա դարձնենք մեր կողմից բերված օրինակ 1-ի և օրինակ 2-ի համատեքստում:

Այսպես, օրինակ 1-ի դեպքում կողմը խոչընդոտել է պայմանի կատարումը, օրինակ՝ դրսևորելով հասարակության կողմից անընդունելի վարքագիծ, իսկ օրինակ 2-ի դեպքում գործադիր մարմնի ղեկավարի կողմից գործարքը կնքվել է առանց համապատասխան շրջահայացության:

THE PRINCIPLE OF GOOD FAITH IN CORPORATE LEGAL RELATIONS

Martin Khachikyan

PhD student at the YSU Chair of Civil Law

"BLC GROUP" LLC senior associate, attorney

martin.khachikyan@ysu.am

ORCID - 0009-0007-3262-0326

Abstract. Good faith in corporate legal relations is a fundamental principle that ensures transparency and fairness in the process of effective realization of the corporation's interests.

This principle is important not only for legal relations, but also for the protection of the corporation's interests.

Good faith in the corporate world includes various components: honesty, responsibility, equality and the rule of law, and the concept of good faith in corporate activities is not limited only to following laws and rules, but is also aimed at preserving corporate culture and corporate interests. By maintaining good faith, companies can avoid abuse, fraud and illegal activities.

Good faith also ensures the moral authority of the organization and brings about reforms in its work. The need to give a correct legal assessment of the behavior of entities acting in corporate legal relations has become more urgent than ever, which is currently due to the rapid development of the corporate governance culture and

current trends in the development of global economic relations. Moreover, the analysis of judicial practice also indicates the need to give a correct legal qualification to corporate disputes, including unscrupulous behavior by corporate management bodies.

Key words: *legal entity; good faith; dishonest behavior; acting in good faith; corporate governance; corporate legal relations; corporate law.*

ПРИНЦИПА ДОБРОСОВЕСТНОСТИ В КОРПОРАТИВНЫХ ПРАВООТНОШЕНИЯХ

Мартин Хачикян

*Аспирант кафедры Гражданского права ЕГУ
Старший юрист ООО «БИЭЛСИ ГРУП», адвокат
martin.khachikyan@ysu.am
ORCID - 0009-0007-3262-0326*

Абстракт. В корпоративных правоотношениях добросовестность является основополагающим принципом, обеспечивающим прозрачность и справедливость в процессе эффективной реализации интересов корпорации.

Этот принцип важен не только для защиты интересов корпорации.

Добросовестность в корпоративном мире включает в себя различные составляющие: честность, ответственность и законность, а понятие добросовестности в корпоративной деятельности не ограничивается соблюдением законов и правил, но и направлена на поддержание корпоративной культуры и корпоративных интересов. Поддерживая честность, компании могут избежать злоупотреблений, мошенничества и незаконной деятельности.

Необходимость правильной правовой оценки поведения субъектов, действующих в корпоративных правоотношениях, стала как никогда актуальной, что обусловлено стремительным развитием культуры корпоративного управления и современными тенденциями развития мирохозяйственных отношений. Более того, анализ судебной практики также указывает на необходимость дать правильную правовую квалификацию спорам корпоративного характера, в том числе недобросовестным действиям органов корпоративного управления.

Ключевые слова - *юридическое лицо; добросовестность; недобросовестное поведение; действовать добросовестно; корпоративное управление; корпоративные правоотношения; корпоративное право.*

ՓՈՐՁԱԳԵՏԻ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՐԴԻ ՀԱՐՑԵՐԸ

Արթուր Զախոյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
arturchakhoyan@ysu.am
ORCID - 0000-0001-5315-946X

Համառոտագիր: Հոդվածում ուսումնասիրվել են փորձագետի կարգավիճակի վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրության կարգավորումները՝ նկատի ունենալով նաև, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունվել, իսկ 2022 թվականի հուլիսի 1-ից սկսել է գործել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որով բոլորովին նոր մոտեցումներ և կարգավորումներ են սահմանվել փորձագետի դատավարական կարգավիճակի, նրա կողմից վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ կատարվող վարության գործողությունների, վերջինիս իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

ՀՀ գերագույն դատարանի պլենումի որոշման, ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների և ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի *կարգավորումների լույսի ներքո ամփոփ ներկայացվել են փորձագետի կարգավիճակը*, փորձագետի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակները և *քննարկվել դրանից բխող որոշ հարցեր:*

Բացի այդ, նկատի ունենալով, որ ՀՀ-ում գործող օրենսդրությամբ փորձագետի համար սահմանված որոշակի միասնական չափանիշներ, սահմանափակումներ կամ պահանջներ ներկայումս չկան, հոդվածում քննարկվել են փորձագիտական գործունեությունը կարգավորող իրավական ակտի ընդունման, մշտապես գործող անկախ որակավորման հանձնաժողով ստեղծելու հարցերը, որոնք, հեղինակի կարծիքով, իրատապ են, քանի որ հանցագործության փաստի առկայությունը կամ բացակայությունը հաճախ կախված է լինում փորձագետի եզրակացությունից:

Կարևորվել է դատական-փորձագիտական գործունեության մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը, որը ՀՀ-ում միասնական կկարգավորի փորձագիտական ոլորտի և փորձագետի իրավական կարգավիճակի վերաբերյալ բոլոր հարցերը, ինչպես նաև կսահմանի փորձագետի սոցիալական երաշխիքները:

Բանալի բառեր – գիտություն; տեխնիկա; մասնագետ; փորձագետ; կարգավիճակ; հմտություն; ունակություն; օժանդակություն; եզրակացություն; դատափորձագիտական գործունեություն:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունիսի 30-ին ընդունվեց, իսկ 2022 թվականի հուլիսի 1-ից գործեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որով բոլորովին նոր մոտեցումներ և կարգավորումներ են սահմանվել փորձագետի դատավարական կարգավիճակի, նրա կողմից վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ կատարվող վարության գործողությունների, վերջինիս իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Նախ՝ գործող օրենսգիրքն առանձին գլուխ է նվիրել վարույթին օժանդակող անձանց կարգավիճակին, որտեղ սահմանվել են նրանց իրավունքներն ու պարտականությունները, իսկ «Սույն օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 6-րդ հոդվածի 14-րդ կետում ներկայացվել է վարույթին օժանդակող անձանց շրջանակը, այն է՝ վկան, նրա օրինական ներկայացուցիչը և փաստաբանը, փորձագետը, թարգմանիչը, հոգեբանը, ընթերական, դատական նիստի քարտուղարը հանդիսանում են վարույթին օժանդակող անձինք:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն նախորդ երկու քրեական դատավարության օրենսգրքերի, գործող օրենսգրքով *քրեական դատավարությանը մասնակցող կամ վարույթին օժանդակող անձանց շրջանակը որոշակի փոփոխությունների է ենթարկվել, քանի որ այդ ցանկից որպես ինքնուրույն սուբյեկտ բացակայում է մասնագետը*:

Ուստի սույն հոդվածի նպատակներն են նոր կարգավորումների լույսի ներքո ամփոփ ներկայացնել փորձագետի կարգավիճակը և քննարկել դրանից բխող որոշ հարցեր:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Գործող օրենսգրքով փորձագետին վերաբերող հիմնական նորամուծություններից մեկն այն է, որ վերջինս մեկտեղում է նաև մասնագետի գործառնությունը: Թեև գործող օրենսգիրքը հրաժարվել է մասնագետին ինքնուրույն սուբյեկտ համարելուց, նրա համար առանձին կարգավիճակ սահմանելուց, սակայն պահպանել է նրա միակ գործառնությամբ՝ ապացուցողական կամ վարույթային գործողությանը մասնակցելով վարույթն իրականացնող մարմնին օժանդակելը՝ այն վերապահելով փորձագետին¹:

Գործող օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ փորձագետը վարույթի առարկայով չհաճագրգռված այն անձն է, որը **հատուկ գիտելիքների կամ հմտությունների** օգտագործմամբ օժանդակում է վարույթին՝ հետազոտություն իրականացնելով և դրա հիման վրա գրավոր եզրակացություն տալով, առանց հետազոտություն իրականացնելու գրավոր կարծիք տալով, ինչպես նաև ապացուցողական կամ վարույթային այլ գործողության կատարմանը մասնակցելով: Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

Ընդ որում՝ հետազոտություն իրականացնելու և դրա հիման վրա գրավոր եզրակացություն տալու եղանակով օժանդակության համար փորձագետը կարող է ներգրավվել ինչպես վարույթն իրականացնող մարմնի, այնպես էլ վարույթի մասնավոր մասնակիցների (մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, պաշտպանի, տուժողի գույքային պատասխանողի, տուժողի և գույքային պատասխանողի օրինական և լիազոր ներկայացուցիչների) կողմից, առանց հետազոտություն իրականացնելու գրավոր կարծիք տալու եղանակով օժանդակության համար փորձագետը կարող է ներգրավվել միայն վերը նշված վարույթի մասնավոր մասնակիցների կողմից, իսկ ապացուցողական կամ վարույթային այլ գործողության կատարմանը մասնակցելու եղանակով՝ միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Սահմանումից հետևում է, որ գործող օրենսգրքով փորձագետը, մեկտեղելով նաև մասնագետի գործառնությունները, ի տարբերություն նախորդ քրեական դատավարության օրենսգրքի, դատավարության ընթացքում ձեռք է բերել բոլորովին նոր կարգավիճակ: Որպես առանձնահատկություն առաջին հերթին կարելի է նշել այն,

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022, էջ 135:

որ փորձագետի կողմից ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարմանը մասնակցելու եղանակով վարությին օժանդակության ժամանակ բարձրացվել է վերջինիս կողմից գիտելիքներին տիրապետելու շենը, քանի որ այս դեպքում փորձագետը ևս պետք է տիրապետի **հատուկ գիտելիքների կամ հմտությունների**, իսկ նախորդ օրենսգրքի կարգավորումների պայմաններում, երբ այս գործառույթը վերապահված էր մասնագետին, վերջինս կարող էր և չտիրապետել հատուկ գիտելիքների, քանի որ համաձայն 1998 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի՝ մասնագետը քրեական գործով չչահագորգված այն անձն է, որին քրեական վարությին իրականացնող մարմինը նշանակում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառներում իր **մասնագիտական հմտությունները և գիտելիքներն** օգտագործելով աջակցելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս: Այլ կերպ՝ եթե փորձագետը պետք է տիրապետեր գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի **բավարար հատուկ գիտելիքներին**, ապա մասնագետը պետք է տիրապետեր գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառների **մասնագիտական հմտությունների և գիտելիքների**:

Որպես կարևոր առանձնահատկություն կարելի է նշել նաև այն, որ համաձայն նախորդ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի՝ մասնագետի հայտնած կարծիքը չէր կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը, իսկ արդեն գործող օրենսգրքի 86-րդ հոդվածով որպես ապացույցի ինքնուրույն տեսակ նախատեսված է նաև փորձագետի կարծիքը:

Վերը նշված հարցերին 2016 թվականին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը և հայտնել հետևյալ իրավական դիրքորոշումը.

««...»

13. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փորձագետի և մասնագետի՝ որպես քրեական դատավարությանը մասնակցող անձանց կարգավիճակի և նրանց լիազորությունների առանձնահատկությունների կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիր: Ուստի անհրաժեշտ է համարում արտահայտել իրավական դիրքորոշումներ, որոնք կարող են ուղղորդող նշանակություն ունենալ նման գործերով դատական պրակտիկան ճիշտ ձևավորելու համար:

«...»

Մինչդեռ մասնագետի հիմնական պարտականությունը իր մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն օգտագործելով առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու գործում քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձին օգնություն ցույց տալն է: Վերոնշյալով պայմանավորված՝ մասնագետի իրավունքների շրջանակը սահմանափակվում է վարությին իրականացնող մարմնի կամ քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձի թույլտվությամբ գործի նյութերին ծանոթանալով և ներկաներին հարցեր տալով, ինչպես նաև առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու հետ կապված հանգամանքներին ներկաների ուշադրությունը հրավիրելով:

15.1. Անդրադառնալով մասնագետի և փորձագետի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակներին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ և 85-րդ հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետը հատուկ գիտելիքներն օգտագործում է հետազոտություն կատարելու և դրա արդյունքում եզրակացություն տալու համար, իսկ մասնագետն իր մասնագիտական հմտություններով ու գիտելիքներով աջակցում է վարությին իրականացնող մարմնին քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելիս: Հետևաբար փորձաքննության արդյունքում փորձագետի կող-

մից կազմվող եզրակացությունը և մասնագետի կողմից տրվող կարծիքը նույնպես ունեն տարբեր իրավական բնույթ և նշանակություն:

«...»

Այսպիսով, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին:

16.1. Ինչ վերաբերում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություններ չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր ունեցած հմտություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս: Այլ խոսքով՝ վերջինիս կողմից տրվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փորձի վրա հիմնված դիրքորոշում: Ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և այն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն¹:

Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածից հետևում է, որ փորձագետը նախ հանդիսանում է վարույթին օժանդակող անձ, նա պետք է լինի վարույթի առարկայով չչափազորված և պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

Մինչդեռ օրենսգիրքը չի տալիս ինչպես «վարույթի առարկայով չչափազորված», այնպես էլ «հատուկ գիտելիք» եզրույթների հասկացությունները:

«Վարույթի առարկայով չչափազորված» եզրույթն առաջին հերթին ենթադրում է փորձագետի անկախություն և ինքնուրույնություն, այսինքն՝ փորձագետը չպետք է գտնվի որևէ կախվածության մեջ ինչպես վարույթն իրականացնող մարմնից, այնպես էլ դատավարության հակադիր շահեր ներկայացնող մասնակիցներից կամ գործով որևէ շահագրգռություն ունեցող ցանկացած անձից և ինքնուրույն պետք է լինի իր կողմից իրականացվող հետազոտությունների իրականացման եղանակների ու մեթոդների ընտրության հարցում, հետևաբար արգելվում է դատավարության կողմերից որևէ մեկի կամ երրորդ անձանց օգտին եզրակացություն ստանալու նպատակով փորձագետի վրա որևէ ազդեցություն գործադրել:

Կարծում ենք, որ փորձագետի անկախության և ինքնուրույնության որոշակի երաշխիք է օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված փորձագետին բացարկելու հիմքերից երկուսը, մասնավորապես՝ որ փորձագետը չի կարող մասնակցել վարույթին՝ եթե նա դատավորի, վարույթի հանրային կամ մասնավոր մասնակցի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կամ այլ կախվածության հարաբերությունների մեջ, և եթե առկա են նրա ձեռնհասությունը կամ անաչառությունը կասկածի տակ դնող հանգամանքներ:

Ինչ վերաբերվում է «հատուկ գիտելիք» հասկացությանը, ապա հարկ է նշել, որ քրեական դատավարության տեսության և կրիմինալիստիկայի գիտության մեջ դրա բովանդակությունը միշտ էլ տարատեսակ քննարկումների առիթ է հանդիսացել²: Ընդհանրացնելով «հատուկ գիտելիք» հասկացության վերաբերյալ տեսությունում առկա բոլոր կարծիքները՝ կարելի է ընդգծել, որ այն չի կարող համարվել

¹ Տե՛ս Արտեմ Արմենի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴ3/0226/01/14 որոշումը:

² Տե՛ս ավելի մանրամասն **Չախոյան Ա.Ս.**, «Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները», ԵՊՀ իրատ., 2013թ., էջեր 55-82:

քրեական և քրեադատավարական, հանրահայտ կամ հանրամատչելի գիտելիքները, «հատուկ գիտելիք»-ը մարդու մասնագիտական պատրաստվածության և փորձի արդյունք է, կիրառվում է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ ապացուցողական կամ կողմնորոշիչ տեղեկություն ստանալու նպատակով: Այլ խոսքով ասված՝ հատուկ գիտելիքները իրավունքի ոլորտի հետ չկապված գիտելիքներ են՝ հանրակրթական ծրագրերի շրջանակներից դուրս բովանդակությամբ, որոնք օգտագործվում են քրեական դատավարության ընթացքում՝ գործի համար ապացուցողական կամ կողմնորոշիչ տեղեկություններ ստանալու նպատակով կամ տվյալ փորձաքննությանն առաջադրված հարցերին պատասխանելու համար:

Ինչպես նկատեցինք, «հատուկ գիտելիք»-ի կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ այն չի կարող լինել իրավունքի ոլորտի որևէ գիտելիք, ինչը և բխում է գործող օրենսգրքի կարգավորումներից, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասը ևս սահմանել է, որ քրեական վարույթին Հայաստանի Հանրապետության իրավունքի կամ միջազգային իրավունքի հարցերով փորձագետ չի ներգրավվում:

«Հատուկ գիտելիքներ» եզրույթի հետ սերտորեն կապված է նաև «հմտություններ» հասկացությունը, որը պայմանավորված է փորձաքննությունների կատարման համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների կիրառական նշանակությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ իրավաբանական գրականությունում¹ որոշակի բնորոշումներում հատուկ գիտելիքները բացահայտվում են հմտությունների և ունակությունների միջոցով: «Հմտություններ»² և «ունակություններ»³ հասկացությունները, որոնք երբեմն հիշատակվում են որպես նույնիմաստ «հատուկ գիտելիքներ» հասկացության հետ, միայն հատուկ գիտելիքների բաղադրիչներ են: Անկասկած հմտությունները և ունակությունները մտնում են հատուկ գիտելիքների մեջ, սակայն նրանք բնութագրում են գիտելիքների գործնական տիրապետումը: Հմտությունը գործողության կատարյալ տիրապետումն է, գիտակցական գործունեության ավտոմատացված պահը, որը ձևավորվում է գիտելիքների հիմքի վրա: Ընդ որում, տարբերում են շարժական, մտավոր և զգայական հմտություններ, ինչպես նաև վարքի հմտություններ: Մտավոր գործունեության հմտությունները հանդես են գալիս որպես մտավոր աշխատանքի անհրաժեշտ բաղադրիչներ (ներմուծվող ինֆորմացիայի վերլուծության, խնդրի պարզաբանման, իրադրության գնահատման, որոշումների ընդունման և մշակման հմտություններ և այլն): Գիտելիքների լայն շրջանակի և արդեն մշակված հմտությունների հիման վրա առաջանում են ունակություններ, որոնք արտահայտում են գործունեության վարպետության այս կամ այն աստիճանը:

Կրիմինալիստիկական գրականության մեջ «հմտություններ» հասկացության տակ հասկացվում է «գործողությունների իրականացման միջոց, որը բազմակի կրկնության արդյունքում հասցվել է ավտոմատացման, և որը հեշտ ու արագ իրականացվում է գիտակցության կողմից նվազագույն վերահսկողության դեպքում»⁴, իսկ «ունակություն» հասկացությունը ձևակերպված է որպես «ծեռք բերված գիտելիքների և հմտությունների արդյունքում մարդու կողմից յուրացված որևէ գործողության կատարման միջոց: Գործողության իրականացման հնարավորություն է ա-

¹ Տե՛ս ավելի մանրամասն **Նույն տեղում, էջեր 79-82:**

² Հմտություն-1.վարժությամբ՝ սովորելով ծեռք բերած ունակություն, 2.որևէ բնագավառի գործնական գիտելիքների ամբողջությունը, տես **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 876:

³ Ունակություն-1.հոգեկան մտավոր կարողություն, ընդունակություն, ձիրք, 2.վարժությամբ ստեղծված սովորություն, տե՛ս վերը նշված աշխատությունը, Դ-Ֆ, էջ 1494:

⁴ Տե՛ս **Белкин Р. С.**, Криминалистика, Учебный словарь-справочник, М., 1999, էջ 107:

ռաջանում ոչ միայն սովորական, այլ նաև փոփոխված պայմաններում¹: Այդ պատճառով հմտությունները և ուսկությունները կարող են հատուկ լինել ցանկացած գիտելիքի: Գիտելիքները, ուսկությունները և հմտությունները ցանկացած նպատակաուղղված գործունեության անբաժան և ֆունկցիոնալ կերպով փոխկապակցված բաղադրամասեր են: Նշվածը հաշվի առնելով է, որ «հատուկ գիտելիքներ» բնորոշման մեջ մենք չենք նշել «հմտություններ» և «ուսկություններ» հասկացությունները, քանի որ դրանք նկատի ենք ունենցել պարտադիր կարգով: Այս կապակցությամբ կրիմինալիստ, ՀՀ վաստակավոր իրավաբան Վահե Ենգիբարյանը գրել է. «Միաժամանակ հարկ է ընդգծել, որ հատուկ գիտելիքների կիրառումը (inter alia), փորձագետից պահանջում է նաև նշված բնագավառում որոշակի հմտությունների տիրապետում»²: Իսկ մեկ այլ հեղինակ նշել է. «Ստացվում է, որ դատական փորձագետ նշանակված անձին ոչ թե «փորձագիտություն» մասնագիտության անհրաժեշտ գիտելիքներ են պետք, այլ հետազոտություն կատարելու միջոցով որոշակի մասնագիտության ոլորտում առաջադրված հարցերի հիմնավոր պատասխաններ կամ տրված խնդիրների գիտականորեն հիմնավորված լուծումներ գտնելու ուսկություններ»³:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև «մասնագիտական ծեռնահասություն» եզրույթին, նկատի ունենալով, որ այն օգտագործվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի միայն 60-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 7-րդ կետերում:

Վ.Ենգիբարյանը այս կապակցությամբ գրել է. «Փորձագիտական հիմնարկներում փորձագետի ծեռնահասությունն ստուգվում և հավաստվում է համապատասխան որակավորման հանձնաժողովների կողմից, որն ստուգված անձին տալիս է ինքնուրույնաբար որոշակի տեսակի փորձաքննություններ կատարելու իրավունքի համապատասխան փաստաթուղթ (թույլտվություն)»⁴:

Կարծում ենք՝ փորձագետի «մասնագիտական ծեռնահասություն»-ը կարող է որոշվել նրա կրթության և մասնագիտական պատրաստվածության մակարդակով, հետազոտությունների տվյալ բնագավառում աշխատանքի փորձով, և դա փորձագետի մոտ կոնկրետ տեսակի փորձաքննության առարկային վերաբերող առաջադրված հարցերը լուծելու ուսկությունն է:

Անցնելով փորձագետի իրավունքներին ու պարտականությունների վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին՝ հարկ է նշել, որ, ի տարբերություն նախորդ երկու օրենսգրքերի, գործող օրենսգիրքը 60-րդ հոդվածում նախ սահմանել է փորձագետի իրավունքները, հետո՝ պարտականությունները:

Նկատի ունենալով, որ փորձագետը վարույթին օժանդակում է երեք եղանակով, ուստի նպատակահարմար ենք համարում փորձագետի իրավունքները և պարտականությունները ևս դասակարգել և այն ներկայացնել օժանդակության յուրաքանչյուր եղանակի համար առանձին: Այսպես.

1. **Հետազոտություն իրականացնելով և դրա հիման վրա գրավոր եզրակացություն տալու եղանակով օժանդակության ժամանակ փորձագետն իրավունք ունի եզրակացություն տալու համար վարույթն իրականացնող մարմնից պահանջելու անհ-**

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 107:

² Տե՛ս Ենգիբարյան Վ., «Նկատառումներ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի փորձաքննություններին վերաբերող դրույթների վերաբերյալ», Պետություն և իրավունք, N 2 (90), 2021, էջ 92:

³ Տե՛ս Մամիկոնյան Կ.Հ., «Դատական փորձագետին գիտական հետազոտական աշխատանք կատարելու փորձառության պահանջը հատուկ գիտելիքների կիրառման բնագավառում», ԴԹՔՀՀ, 2023.9:

⁴ Տե՛ս Ենգիբարյան Վ.Գ., Դատական փորձաքննությունների արդի հիմնահարցերը, Երևան, 2007, էջ 92:

րաժեշտ օբյեկտներ, նմուշներ և այլ նյութեր, վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալու վարույթի վերաբերելի նյութերին և դրանցից դուրս գրելու անհրաժեշտ տեղեկություններ, իր պարտականությունները պատշաճ կատարելու համար հարցեր տալու մեղադրյալին, տուժողին, վկային, մասնակցելու վարութային գործողություններին՝ որքանով դրանք վերաբերում են փորձաքննության առարկային և անհրաժեշտ են եզրակացություն տալու համար: **Փորձագետը պարտավոր է** վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր **մասնագիտական ձեռնահասությունը**՝ հաստատող փաստաթղթերը, իրեն առաջադրված հարցերով տալ հիմնավոր և անաչառ եզրակացություն, տալ ցուցմունք, ձեռնպահ մնալ առաջադրված հարցերին պատասխանելուց, եթե դրանք դուրս են իր հատուկ գիտելիքների կամ հմտությունների շրջանակից, կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար, եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլև իր իրավասության շրջանակի մեջ մտնող և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով, իրեն ներգրաված մարմնի պահանջով ներկայացնել հետազոտության կատարման ծախսերի նախահաշիվ և կատարած ծախսերի մասին հաշվետվություն, ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով:

2. Առանց հետազոտություն իրականացնելու գրավոր կարծիք տալու եղանակով **օժանդակության ժամանակ** փորձագետն **իրավունք ունի** կարծիք տալու համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալու վարույթի վերաբերելի նյութերին և դրանցից դուրս գրելու անհրաժեշտ տեղեկություններ, իր պարտականությունները պատշաճ կատարելու համար հարցեր տալու մեղադրյալին, տուժողին, վկային: **Փորձագետը պարտավոր է** իրեն դիմած անձին ներկայացնել իր մասնագիտական ձեռնահասությունը՝ հաստատող փաստաթղթերը, իրեն առաջադրված հարցերով տալ հիմնավոր և անաչառ կարծիք, տալ ցուցմունք, կարծիք տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլև իր իրավասության շրջանակի մեջ մտնող և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով, իրեն ներգրաված անձի պահանջով ներկայացնել հետազոտության կատարման ծախսերի նախահաշիվ և կատարած ծախսերի մասին հաշվետվություն:

3. Ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարմանը մասնակցելու եղանակով **օժանդակության ժամանակ** փորձագետն **իրավունք ունի** ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության արձանագրությանը և իր հաղորդած տեղեկությունների կամ գործողությունների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված ներկայացնելու դիտողություններ, վարույթն իրականացնող մարմնի կողմից ներգրավված լինելու դեպքում յուրաքանչյուր անգամ ստանալու ապացուցողական կամ վարութային այլ գործողությանը մասնակցելու համար կատարած ծախսերի հատուցում: Բացի այդ, ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանը մասնակցելիս փորձագետն իրավունք ունի նաև.

- ✓ համապատասխան գործողությունը կատարող անձի թույլտվությամբ ծանոթանալու վարույթի նյութերին և հարցեր տալու ներկաներին,
- ✓ ներկաների ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքների վրա, որոնք մտնում են իր մասնագիտական իրավասության մեջ,
- ✓ առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու վերաբերյալ հարցերով անելու հայտարարություններ:

Փորձագետը պարտավոր է ապացուցողական կամ վարութային այլ գործողությանը մասնակցելիս չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վա-

րութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները և ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին:

Բացի վերը նշվածներից, փորձագետն ունի նաև իրավունքներ և պարտականություններ, որոնք վերաբերելի կամ կիրառելի են միայն դատական վարույթում: **Փորձագետն իրավունք ունի** դատարանի և վարույթի մասնակիցների ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքների վրա, որոնք կապված են փորձաքննության առարկայի և փորձագետին առաջադրվող հարցերի ձևակերպման հետ, ծանոթանալու իր մասնակցությամբ տեղի ունեցած դատական նիստի արձանագրությանը և իր հաղորդած տեղեկությունների կամ գործողությունների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված ներկայացնելու դիտողություններ: **Փորձագետը պարտավոր է** վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ժամանակ տեղեկություններ հայտնել իր **մասնագիտական ձեռնահաստության** և վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին, առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստի դահլիճը և չհրապարակել իր մասնակցությամբ տեղի ունեցած դեմիսակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները, ենթարկվել դատական նիստի կարգին:

Հարկ է նշել, որ գործող օրենսգիրքը փորձագետին վերապահել է նաև նույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ իրականացնելու հնարավորություն, սակայն դրան հակառակ սպառնալիք սահմանել է փորձագետի պարտականությունները և դրանց կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում վարույթն իրականացնող մարմնին իրավունք է վերապահել փորձագետի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով որոշում կայացնելու վերջինիս հարկադրաբար ներկայացնելու մասին:

Օրենսգրքով փորձագետի համար նախատեսվել են նաև որոշ սոցիալական երաշխիքներ: Քրեական վարույթի քննության ընթացքում փորձագիտական հիմնարկներում աշխատող փորձագետները, եթե վարույթին մասնակցել են ի կատարումն աշխատանքային առաջադրանքի, աշխատավայրից ստանում են աշխատավարձ:

Իսկ եթե փորձագետներն աշխատանքը կատարել են վարույթն իրականացնող մարմնի հետ անմիջական պայմանավորվածությամբ, ապա իրավունք ունեն պետական միջոցների հաշվին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով ստանալու վարձատրություն: Այս դեպքում վարձատրությունը տրվում է վարույթն իրականացնող մարմնի կայացրած որոշման հիման վրա, սակայն փորձագետի կողմից հաշիվ ներկայացնելուց հետո:

Իսկ եթե փորձագետներն աշխատանքը կատարել են վարույթի համապատասխան մասնավոր մասնակցի հետ ունեցած պայմանավորվածությամբ, ապա ստանում են վարույթի համապատասխան մասնավոր մասնակցի հետ պայմանավորված չափով վարձատրություն:

Բացի վերը հիշատակված դեպքերից, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, փորձագետի դիմումի համաձայն պետական միջոցների հաշվին ենթակա են հատուցման նաև վարույթի ընթացքում փորձագետի կողմից կատարված հետևյալ ծախսերը.

1) վարույթն իրականացնող մարմնի հրավերով ներկայանալու համար կատարված տրանսպորտային ծախսերը (բացառությամբ օդային տրանսպորտով երթևեկության արժեքի), իսկ վարույթն իրականացնող մարմնի համաձայնությամբ՝ նաև օդային տրանսպորտով երթևեկության արժեքը,

2) գիշերակացի արժեքը, եթե այդ ծախսերն այլ կերպ չեն հատուցվել,

3) վարույթն իրականացնող մարմնի պահանջով մշտական բնակության վայրից դուրս բնակվելու համար անհրաժեշտ օրապահիկը, եթե այդ ծախսերն այլ կերպ չեն հատուցվել,

4) միջին աշխատավարձն այն ամբողջ ժամանակի համար, որի ընթացքում վարույթին մասնակցելու համար անձը եղել է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ՝ չկատարելով աշխատանքային պարտականությունները, եթե միջին աշխատավարձը գործատուն չի պահպանել,

5) վարույթն իրականացնող մարմնի պահանջով վարության գործողությանը մասնակցելու հետևանքով աղտոտված, փչացած, ոչնչացած կամ կորած գույքի մաքրման, նորոգման, վերականգնման կամ ձեռքբերման ծախսերը:

Փորձագետին հատուցվում է նաև նրան պատկանող այն նյութերի արժեքը, որոնք նա սպառել է հանձնարարված աշխատանքը կատարելիս, ինչպես նաև աշխատանքի կատարման համար անհրաժեշտ սարքավորումներն օգտագործելու, ծառայություններ ստանալու համար կատարած ծախսերը:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսվել է փորձագետի նոր դատավարական գործառույթ և սահմանվել, որ փորձագետը օժանդակում է վարույթին նաև առանց հետազոտություն իրականացնելու գրավոր կարծիք տալով, ինչով էլ պայմանավորված՝ կարելի է փաստել, որ ապացուցման գործընթացում ընդլայնվել են նաև պաշտպանության կողմի դատավարական հնարավորությունները, քանի որ քրեական վարույթի ընթացքում նրանց հնարավորություն է ընձեռվել ստանալու առանձին ապացույց՝ փորձագետի կարծիք:

Հաջորդ հարցը, որը, մեր կարծիքով, խիստ արդիական է, և ցանկանում ենք անդրադառնալ, վերաբերում է դատափորձագիտական հաստատությունների և դատական փորձագետների իրավական կարգավիճակին, խնդիրներին, դրանց գործունեության իրավական և կազմակերպչական հարցերին, փորձագետների որակավորմանը՝ որոակավորում շնորհելուն կամ այն մերժելուն, որակավորումն ուժը կարգրած ձանաչելու հիմքերին և ընդհանրապես՝ փորձագետի կողմից նման կարգավիճակ ձեռք բերելու համար ներկայացվող պահանջներին կամ սահմանափակումներին:

Սակայն ՀՀ գործող օրենսդրության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ ներկայումս վերը նշված հարցերը կարգավորված չեն, ավելին՝ գործող դատական փորձագետներին որակավորելու միասնական կարգ կամ օրենք գոյություն չունի, և օրենսդրությամբ նախատեսված և ապահովված չեն նաև փորձագետների սոցիալական երաշխիքները:

Քննարկվող ոլորտը կարգավորելու առումով ներկայում գործում է միայն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում դատական փորձագետի որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 28.03.2000թ. թիվ 151 հրամանը, որն էլ վերաբերում է միայն ՀՀ արդարադատության նախարարության համակարգում փորձագիտական որոշակի մասնագիտությամբ դատական փորձագետի որակավորում շնորհելուն:

Մինչդեռ նշված հարցերից մի քանիսը, մասնավորապես որպես փորձագետ հանդես գալու համար նրան ներկայացվող պահանջները և այն արգելքները, որոնց առկայության պայմաններում անձը չի կարող լինել փորձագետ, կարևորվել են դեռևս XVIII դարում, ինչպես «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ով, այնպես էլ՝ Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառաց»-ով:

«Դատաստանագիրք Աստրախանի Հայոց»-ի բնագիրն առաջին անգամ գրաբար հայերենով գիտական շրջանառության մեջ դրվել է 1967 թվականին Մատենադարանի հրատարակությամբ, որն իրականացրել է Ֆ. Գ. Պողոսյանը¹:

¹ Տե՛ս այս մասին առավել մանրամասն Պողոսյան Ֆ.Գ., «Դատաստանագիրք Աստրախանի Հայոց», Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967:

իրավունքի այս հուշարձանն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ հանգադրությունների քննության, ինչպես նաև քրեական և քաղաքացիական դատավարությունների ժամանակ անհրաժեշտություն է առաջացել գործին մասնակից դարձնելու իրազեկ անձանց՝ այս կամ այն փաստը հաստատելու կամ ժխտելու, հետազոտություններ կատարելու համար, ինչպես նաև առանձին գլուխ է նախատեսվել (դատաստանագրքի առաջին մասի «ԺԶ» գլուխը) «Վճռահատության» մասին, որի 1-ին հոդվածով սահմանվել է՝ «Վճռահատ է կոչվում նա, ով իրավաբանների կամ դատավորների ընտրությամբ նշանակվում է իրազեկ լինելու և լուծում տալու տարածայնություններին ...», իսկ 2-րդ հոդվածով էլ սահմանվել է, որ վճռահատներ չէին կարող նշանակվել մեղքերի համար հրապարակային պատժի ենթարկվածները, խելագարները, մեղքեր գործելու համար հեռացվածները, եկեղեցու կողմից նզովվածներն ու բանադրվածները, քսանհինգ տարին չլրացրածները, գրել և կարդալ չտվողները: Այսինքն՝ դեռևս նշված ժամանակահատվածում գործել է որոշ սահմանափակումներ, և վճռահատ նշանակվելու համար անձը պետք է լինել իրազեկ, ազնիվ, գործունակ, ունենար որոշակի փորձ ու որոշակի գիտելիքներ:

Վճռահատները, մասնակցելով գործին, իրենց հետևությունները պետք է շաղաղորդեին գրավոր ձևով, և այդ փաստաթուղթը անվանվել է «Որոշում»:

Իսկ Շահամիր Շահամիրյանը, «Որոգայթ Փառաց»-ով նախատեսելով գիտակ անձանց՝ մասնագետների կամ փորձագետների ինստիտուտը, 127-րդ և 173-րդ գլուխներով բացի այն, որ պետությանը պարտավորեցրել է նրանց նկատմամբ առանձնակի հոգածություն ցուցաբերել, սահմանել է նաև, թե ովքեր կարող են հանդես գալ որպես մասնագետներ կամ փորձագետներ, մասնավորապես, որ. «Մասնագետը, քանի դեռ իր վարպետից ստորագրված վկայագիր չի ստացել, որով երաշխավորվում է, որ սա կատարյալ մասնագետ է, իրավունք չունի ինքնուրույն գբաղվել իր արհեստով»:

Փորձագետի որակավորման հարցը դեռևս 1992 թվականին կարևորել է նաև Գերագույն դատարանը և արտահայտել հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Քննության առնելով քրեական գործերով փորձաքննություններ կատարելու պրակտիկան, ՀՀ Գերագույն դատարանի պլենումը նշում է, որ դատարանները և նախաքննության մարմիններն օրենքին համապատասխան փորձաքննություն են նշանակում գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար:

Դրա հետ միաժամանակ դատարաններն երբեմն փորձաքննություն են նշանակում պարզելու այնպիսի հարցեր, որոնց լուծումը հատուկ գիտելիքներ չեն պահանջում, կամ փորձագետների առջև իրավական և այլ բնույթի այնպիսի հարցեր են դնում, որոնց պատասխանները դուրս են գալիս նրանց իրավասության սահմաններից:

«...»

11. Դատարանները պետք է հաշվի առնեն, որ փորձագետին առաջադրված հարցերը և դրանց վերաբերյալ փորձագետի եզրակացությունը չեն կարող դուրս գալ այն անձի հատուկ գիտելիքների սահմաններից, որին հանձնարարվել է փորձաքննության կատարումը (ՀՀ քր. դատ. օր. 66 հոդված): Դատարանները չպետք է թույլ տան փորձագետի առաջ այնպիսի իրավական հարցեր դնելու, որոնք չեն մտնում նրա իրավասության մեջ (օրինակ՝ տեղի է ունեցել արդյոք հափշտակվում կամ պակասորդ, սպանություն կամ ինքնասպանություն և այլն):

«...»

Գնահատելով փորձագետի հետևությունները, դատարանները պետք է հաշվի առնեն նրա որակավորումը, ինչպես նաև այն հանգամանքը, թե ներկայացվել են արդյոք փորձագետին բավարար նյութեր և հետազոտման պատշաճ օբյեկտներ»¹:

Փորձագիտական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ընդունման, մշտապես գործող անկախ որակավորման հանձնաժողով ստեղծելու անհրաժեշտությունը տարիներ առաջ մեր կողմից նույնպես կարևորվել է և արվել համապատասխան առաջարկություններ²:

ՀՀ-ում գործող օրենսդրությամբ փորձագետի համար սահմանված որոշակի չափանիշներ, սահմանափակումներ կամ պահանջներ ներկայումս չկան, և տեսականորեն կարող է ստացվել այնպես, որ, օրինակ, որպես փորձագետ հանդես գա դատվածություն ունեցող անձը: Կարծում ենք, որ փորձագետի համար օրենսդրությամբ պետք է սահմանվի միասնական պահանջներ և սահմանափակումներ, օրինակ՝ փորձագետը պետք է տիրապետի հայերենին, լինի գործունակ, որակավորված, ունենա ՀՀ քաղաքացիություն, բարձրագույն կրթություն, անցած լինի զինվորական ծառայություն, չունենա դատվածություն կամ փորձագետի աշխատանքը խոչընդոտող հիվանդություն, առկա չլինի վերջինիս նկատմամբ ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում և այլն:

Մեր կարծիքով, վերը նշված հարցերը ներկայումս հրատապ են, քանի որ հանցագործության փաստի առկայությունը կամ բացակայությունը հաճախ կախված է լինում փորձագետի եզրակացությունից:

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարծում ենք, որ պետք է ընդունվի դատական-փորձագիտական գործունեության մասին օրենք, որը կկարգավորի ոլորտին վերաբերող վերը քննարկված բոլոր հարցերը, ինչպես նաև կսահմանի փորձագետի սոցիալական երաշխիքները:

Հաշվի առնելով, որ բացի քրեադատավարական ոլորտից, հատուկ գիտելիքները փորձագետների կողմից լայնորեն կիրառվում են նաև քաղաքացիադատավարական և այլ ոլորտներում, ուստի կարևոր է նաև միասնական օրենքով «հատուկ գիտելիք» հասկացության, փորձագետի մասնագիտական ձեռնահաստության, նրա կողմից մասնագիտական էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ դրույթների սահմանումը:

Բացի այդ, ՀՀ-ում անհրաժեշտ է ստեղծել մշտապես գործող անկախ որակավորման հանձնաժողով, որտեղ էլ պետք է որակավորվեն (որոշվեն փորձագետի մասնագիտական ձեռնահաստությունը) ՀՀ բոլոր փորձագիտական հիմնարկների փորձագետները: Այդ հանձնաժողովի կազմի մեջ պետք է ներգրավվեն, օրինակ, ներկայիս փորձագիտական հաստատությունների հեղինակավոր աշխատակիցները, կրիմինալիստիկական տեխնիկայի, դատական բժշկության, հոգեբանության, հոգեբուժության և այլ ոլորտի գիտնականները:

Նշված հանձնաժողովի աշխատանքներին կարող է, երբեմն էլ պետք է նախորդի այն փորձագետների լրացուցիչ տեխնիկա-կրիմինալիստիկական նախապատրաստությունը, որոնց հատուկ գիտելիքները պետք է գնահատվեն: Այդպիսի նախապատրաստություն կարող է իրականացվել մասնագիտացված փորձագիտական հաստատությունների կամ ուսումնական հաստատությունների բազայի հիման վրա, կամ էլ պետք է ստեղծվի հատուկ մասնագիտացված դպրոց:

Տվյալ հանձնաժողովը պետք է պարզի փորձագետների մոտ **հատուկ գիտելիքների, հմտությունների** առկայությունը, մասնագիտական ձեռնահաստությունը, այ-

¹ Տե՛ս «Քրեական գործերով դատական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության գերագույն դատարանի պլենումի 1992 թվականի մայիսի 26-ի որոշումը

² Տե՛ս ավելի մանրամասն **Զախոյան Ա.Ս.**, «Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները», ատենախոսություն, 185 էջ, Երևան 2012:

սինքն՝ ինչպես հետազոտություններ, այնպես էլ հանցագործության նյութական հետքեր և այլ իրեղեն ապացույցներ որոնելիս, հայտնաբերելիս, ֆիքսելիս, վերցնելիս տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցները ինքնուրույն կիրառելու կարողություններն ու հմտությունները, քանի որ գործող օրենսդրությամբ փորձագետը նաև ապացուցողական կամ վարությամբ այլ գործողության կատարմանը մասնակցելու եղանակով է օժանդակում վարույթն իրականացնող մարմնին:

Եվ վերջում, ինչպես արդեն նշել ենք վերևում, քանի որ հատուկ գիտելիքները և հմտությունները ցանկացած նպատակաուղղված գործունեության անբաժան և ֆունկցիոնալ կերպով փոխկապակցված բաղադրամասեր են, ինչը իրավացիորեն ամրագրվել է նաև ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասում («... հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ ...»), 60-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում («... հատուկ գիտելիքների կամ հմտությունների շրջանակից ...»), 91-րդ հոդվածի 1-ին մասում («... հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, ...»), 92-րդ հոդվածի 1-ին մասում («... հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ ...»), 257-րդ և 259-րդ հոդվածներում, ուստի օրենսգրքի տրամաբանությունը պահպանելու և որոշակի մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք 59-րդ հոդվածի 3-րդ մասում «գիտելիքների» բառից հետո լրացնել «և հմտությունների» բառերը:

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ СТАТУСА ЭКСПЕРТА КАК ЛИЦА, СОДЕЙСТВУЮЩЕГО ПРОИЗВОДСТВУ

Артур Чахоян

*Доцент кафедры уголовно-процессуального права
и криминалистики ЕГУ, кандидат юридических наук
arturchakhoyan@ysu.am
ORCID - 0000-0001-5315-946X*

Абстракт: В статье были изучены положения действующего законодательства РА, касающиеся статуса эксперта, с учетом также того, что 30 июня 2021 года был принят, а с 1 июля 2022 года начал действовать новый Уголовно-процессуальный кодекс РА, которым были установлены совершенно новые подходы и положения в отношении процессуального статуса эксперта, процессуальных действий, производимых по поручению органа, осуществляющего производство, прав и обязанностей последнего.

В свете решения пленума Верховного суда РА, правовых позиций кассационного суда РА и положений действующего Уголовно-процессуального кодекса РА был кратко представлен статус эксперта, основные цели деятельности, осуществляемой экспертом, и обсуждены некоторые вытекающие из этого вопросы.

Кроме того, учитывая, что в настоящее время нет определенных единых критериев, ограничений или требований, установленных действующим законодательством РА для эксперта, в статье обсуждались вопросы принятия правового акта, регулирующего экспертную деятельность, создания постоянно действующей независимой квалификационной комиссии, которые, по мнению автора, являются актуальными, поскольку наличие или отсутствие факта преступления часто зависит от заключения эксперта.

Была подчеркнута важность принятия закона О судебно-экспертной деятельности, который в Армении будут регулировать все вопросы, касающиеся экспертной сферы и правового статуса эксперта, а также определит социальные гарантии эксперта.

Ключевые слова – наука; техника; специалист; эксперт; статус; навык; способность; способствовать; заключение; судебно-экспертный.

TOPICAL ISSUES OF THE STATUS OF AN EXPERT AS A PERSON ASSISTING IN THE PRODUCTION

Artur Chakhoyan

Associate Professor at the YSU Chair of Criminal Justice and Criminalistics, Candidate of Law
arturchakhoyan@ysu.am
ORCID - 0000-0001-5315-946X

Abstract: The article examined the provisions of the current legislation of the Republic of Armenia concerning the status of an expert, taking into account also that on June 30, 2021, the new Criminal Procedure Code of the Republic of Armenia was adopted, and from July 1, 2022, the new Criminal Procedure Code of the Republic of Armenia began to operate, which established completely new approaches and provisions concerning the procedural status of an expert, procedural actions performed by him on behalf of the body carrying out the production, the rights and obligations of the latter.

In the light of the decision of the Plenum of the Supreme Court of the Republic of Armenia, the legal positions of the Court of Cassation of the Republic of Armenia and the provisions of the current Criminal Procedure Code of the Republic of Armenia, the status of the expert, the main objectives of the activities carried out by the expert were briefly presented, and some issues arising from this were discussed.

In addition, given that currently there are no certain uniform criteria, restrictions or requirements established by the current legislation of the Republic of Armenia for an expert, the article discussed the adoption of a legal act regulating expert activity, the creation of a permanent independent qualification commission, which, in the author's opinion, are relevant, since the presence or absence of a crime is often depends on the expert's opinion.

The importance of the adoption of the law on forensic expertise was emphasized, which in Armenia will unify all issues related to the expert sphere and the legal status of an expert, as well as define the social guarantees of an expert.

Keywords – Science; technology; specialist; expert; status; skill; ability; assistance; conclusion; forensic expert.

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԻ

Գարիկ Ավագյան

ՀՀ սնանկության դատարանի դատավոր,
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս
garik.avagyan@ysu.am
ORCID - 0009-0007-5156-6126

Մարիամ Մելքոնյան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող
mariam.melkonyan10@edu.ysu.am
ORCID - 0009-0002-8491-2308

Համառոտագիր: Սնանկության իրավունքի՝ որպես իրավունքի համակարգի կառուցվածքային տարրի վերաբերյալ թե՛ իրավունքի տեսությունում, թե՛ գործնականում առկա է միասնական մոտեցում: ՀՀ-ում չկան գիտական հետազոտություններ վերոնշյալ խնդրի կապակցությամբ, ուստի աշխատանքը նպատակ է հետապնդել առաջին հերթին տալ սնանկության իրավունքի բովանդակային և տեսական բնութագիրը, այնուհետև փորձել հստակեցնել դրա տեղն ու դերը ՀՀ իրավունքի համակարգում: Ըստ հեղինակների՝ սնանկության իրավունքը բարդ, բազմաշերտ և համալիր իրավունքի համակարգի կառուցվածքային տարր է, ինչին ամբողջովին բնորոշ է են իրավունքի տեսությանը արդեն իսկ հայտնի իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկի հատկանիշները: Ուստի առաջարկվում է տեսության մեջ ներդնել սնանկության իրավունքին կամ իրավունքի համակարգի կառուցվածքային համանման տարրերը բնորոշող նոր կատեգորիա, ինչն ամբողջովին կհամապատասխանի դրանց բնույթին: Դրա կատարումը էական ազդեցություն կունենա իրավունքի տեսական և գործնական առումներով զարգացման վրա, քանի որ իրավունքի համակարգի կառուցվածքային տարրի հստակ բնորոշումը և դրա պատկանելիության վերահանումը նպաստում են իրավակիրառ պրակտիկայում խնդիրներից խուսափելուն, միասնական մոտեցումների ձևավորմանը և զարգացման հեռանկարներ են ստեղծում:

Բանալի բառեր – իրավունքի համակարգ; իրավունքի համակարգի կառուցվածքային տարրեր; սնանկության իրավունք; նյութական և վարութային նորմեր; հանրային և մասնավոր իրավունք; իրավունքի համակարգի համալիր կառուցվածքային տարր; քաղաքացիական դատավարության տարբերակված ձև:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սնանկության իրավունքի՝ իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկին (իրավունքի ճյուղ, ենթաճյուղ, ինստիտուտ) պատկանելության հարցը մշտապես եղել է տեսական քննարկումների առարկա: Այդ հարցի կապակցությամբ տեսաբանների մոտ առկա են տարակարծություններ, մասնավորապես՝ սնանկության իրավունքը դիտարկվում է որպես.

1. քաղաքացիական կամ առևտրային, տնտեսական իրավունքի ինստիտուտ,
2. իրավունքի համալիր ինստիտուտ,

3. միջճյուղային ինստիտուտ,
4. օրենսդրության համալիր ճյուղ¹,
5. իրավունքի ինքնուրույն ճյուղ², և այլն:

Նկատի ունենալով այն, որ թե՛ տեսության մեջ, թե՛ գործնականում առկա չէ սնանկության՝ որպես իրավունքի համակարգի կառուցվածքային տարրերից որևէ մեկին պատկանելության հարցի վերաբերյալ միասնական մոտեցում, հայ հետազոտողների շրջանում գրեթե լիովին բացակայում են քննարկվող թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները, սույն հոդվածով հնարավորինս կփորձենք որոշակիացնել սնանկության իրավունքի տեղն ու դերը Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգում, քանի որ վերջինս ունի տեսական և գործնական էական նշանակություն, քանզի իրավունքի ճյուղի հաջող ձևավորումը իրավունքի կանոնների արդյունավետ կիրառման հիմնական գրավականն է: Ավելին, հասարակությունում նորմատիվ իրավական կարգավորիչների համահունչ, տրամաբանորեն ամբողջական համակարգի ստեղծումը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի համակարգումը թույլ են տալիս անհրաժեշտ իրավական նորմերը արագ որոնել և գտնել³:

Սնանկության՝ որպես իրավունքի համակարգի ինքնուրույն կառուցվածքային տարրի բնութագրման համար օգտվել ենք զարգացման դիալեկտիկական ընթերցման (պատմականության սկզբունքի) մեթոդաբանությունից, որը ոչ այլ ինչ է, քան հետազոտվող օբյեկտի տրամաբանական արտապատկերումը: Այս մեթոդի դիրքերից սնանկությունն ուսումնասիրվել է դրա դինամիկ զարգացման գործընթացում նկատի ունենալով դրա կապը և կախվածությունը քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքներից: Միաժամանակ օգտագործվել են նաև այնպիսի մասնավոր մեթոդներ, ինչպիսիք են իրավահամեմատական, դեդուկտիվ և դատական պրակտիկայի ընդհանրացման մեթոդները:

2. ԲՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես, **իրավունքի ճյուղ** է համարվում իրավական նորմերի այն համակցությունը, որը իրավունքի համակարգի ինքնուրույն մաս է և կարգավորում է որակապես միասեռ հասարակական հարաբերությունների ոլորտ՝ իրեն հատուկ մեթոդով⁴: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրավունքի ճյուղը իրավական նորմերի և ինստիտուտների առանձին ամբողջություն է, որը կարգավորում է միատարր սոցիալական հարաբերություններ, ինչն արտացոլում է համակարգ ձևավորող կապերի ավելի բարձր մակարդակ և բնութագրվում է որոշակի ամբողջականությամբ և ինքնավարությամբ⁵: Իրավունքի ճյուղը ներկայացվում է նաև որպես «պետությունում գործող իրավական ամբողջության կառուցվածքային, կազմակերպական առանձին և անբաժանելի մաս (ճյուղ), իրավական համակարգի բնորոշ տարր, որն արտահայտում է իր էությունը զարգացման համապատասխան փուլում, ունի իրավական, անհատական ընդհանուր հատկանիշներ և նախատեսված է հասարակայնության հետ կապերի որոշակի տարածքի (բլոկի) մեթոդաբանորեն մեկուսացված կարգա-

¹ Տե՛ս **Соколов А. Д.** Модель института несостоятельности (банкротства) в системе российского права, «Вестник науки» № 12 (69) Том 4, Москва, 2023, էջ 562:

² Տե՛ս **Телюкина М. В.** Предмет, метод, цели, принципы и иные характеристики конкурсного права // Труды Института государства и права РАН, Том 12, № 6, 2020, էջ 65:

³ Տե՛ս **Бибилло В. Н.** Теория государства и права, Право и экономика, Минск, 2015, էջ 126:

⁴ Տե՛ս **Վաղարշյան Ա. Գ.** Պետության և իրավունքի տեսություն-2. Ղափախություններ, Երևանի պետական համալսարան, Երևան, 2017, էջ 189:

⁵ Տե՛ս **Алексеев С. С., Архипов С. И.** Теория государства и права, М., 2005, էջ 270: <https://www.at.alleng.org/d/jur/jur401.htm> (վերջին մուտք՝ 23.09.2024):

վորման համար»¹: Իրավունքի ճյուղերն առանձնացնելիս էական նշանակություն ունի նաև դրանց օրենսդրական ամրագրման ակտի առկայությունը (օրենք, օրենսգիրք)²: Վերոշարադրյալն ամփոփելով և ընդգծելով իրավունքի տեսությանը հայտնի մոտեցումներն իրավունքի ճյուղին բնորոշ հատկանիշների վերաբերյալ՝ ստացվում է, որ իրավունքի ճյուղը **1)** իրավունքի համակարգի ինքնուրույն մաս է, **2)** դրա բաղկացուցիչ մասն են կազմում իրավունքի ենթաճյուղերը, ինստիտուտները (ներքին և նորմերը, **3)** դրան բնորոշ են իրավունքի նորմերի առավել սերտ կապվածությունը, ամբողջականությունը և ինքնավարությունը, **4)** ունի իրեն հատուկ կարգավորման առարկա, ինչի կազմում են որակապես միասեռ հասարակական հարաբերություններ, **5)** առանձնանում են առարկան ձևավորող հատուկ մեթոդով (ներքին), **6)** կոդիֆիկացիայի արդյունքում ստանում է նորմատիվ բնույթ, ձև, **7)** առանձնանում է իր ներքին կառուցվածքով՝ ընդհանուր և հատուկ մասերի բաժանմամբ:

Իրավունքի ենթաճյուղը ձևավորվում է հետևյալ պայմանների առկայությամբ՝ **1)** իրավունքի ենթաճյուղի մաս կազմող մի շարք միատարր ինստիտուտների միավորում, որոնց բնութագրական է հատուկ բնույթն ու ճյուղային մեկուսացվածությունը, **2)** դրա կազմում են ընդհանուր ինստիտուտներ կամ ինստիտուտների խմբեր, **3)** դրա մասը կազմող հասարակական հարաբերությունները միատարր են, իսկ ինստիտուտները՝ «մասնագիտացված» և «տարբերակված»³:

Իսկ **իրավունքի ինստիտուտը** իրավական նորմերի համեմատաբար փոքր, կայուն խումբ է, որը կարգավորում է սոցիալական հարաբերությունների որոշակի տեսակ⁴: Այլ տեսակետների համաձայն՝ իրավունքի ինստիտուտները կոչված են կարգավորելու հասարակական կյանքի առանձին հատվածներ, կողմեր: Ինստիտուտը իրավունքի ճյուղի բաղկացուցիչ մաս է, բլոկ, օղակ, և ամեն ճյուղ բազմաթիվ ինստիտուտներ ունի⁵: Ինստիտուտները կարող են լինել ճյուղային և միջճյուղային (համալիր)⁶:

Հարկ է նշել, որ բավականին խրթին է իրավունքի ճյուղերը միմյանցից և դրանք ինստիտուտներից տարանջատելը, քանի որ անհրաժեշտ է խորը վերլուծություն կատարել՝ ուսումնասիրելով ոլորտի իրավական կարգավորման **առարկան և մեթոդը**: Այս պայմաններում անհրաժեշտ է հերթականությամբ քննարկել վերոնշյալ կատեգորիաները:

Հայտնի է, որ իրավունքի կարգավորման առարկան կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնց առկայությամբ են պայմանավորվում իրավունքի տվյալ ճյուղի նորմերի գոյությունն ու գործողությունը: Նախքան անդրադառնալը սնանկության իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթին՝ կարիք կա նախ և առաջ բացահայտելու սնանկության իրավունքի հասկացությունը՝ հաշվի առնելով գիտնականների առաջ քաշած տեսակետները դրա իրավական բնույթի էական հատկանիշների վերաբերյալ:

¹ Ст'ю Курдюк Г. П. Отрасль права как элемент системы права (Теоретико-правовое исследование): дис. ... канд. юрид. наук. Краснодар, 2004:

² Ст'ю Колоткина О. А., Морозова А. С., Ягофарова И. Д. Теория государства и права: Учебное пособие / Москва : ИНФРА-М, 2021, էջ 294:

³ Ст'ю Минбалеєв А. В. Подотрасль права как элемент системы права (на примере права массовых коммуникаций), Вестник ЮУрГУ. Серия «Право», том 13, № 4, Челябинск, 2013.

⁴ Ст'ю Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права: Учебник, Юрист, 2004, էջ 151:

https://pravo-olymp.ru/wp-content/uploads/2013/04/TGP_Matuzov_Malko.pdf (վերջին մուտք՝ 23.09.2024):

⁵ Ст'ю նույն տեղում:

⁶ Ст'ю Алексеев С. С., Архипов С. И., Корельский В. М., Леушин В. И., Перевалов В. Д., Пучков О. А., Русинов Р. К., Семитко А. П., Тарасов Н. Н., Шабуров А. С. Теория государства и права, М., 2005, էջ 270:

Այսպես, Վ. Ֆ. Պոպոնդոպուլոն առաջարկում էր տարբերակել մրցութային իրավունք և մրցութային վարույթ հասկացությունները՝ համարելով, որ մրցութային իրավունքը մասնավոր իրավունքի, իսկ մրցութային վարույթը հանրային իրավունքի ինստիտուտներ են¹։ Մեր կարծիքով՝ վերոնշյալ բաժանում-դասակարգումն այնքան էլ տեղին չէ, քանի որ սնանկության (կամ մրցութային) իրավունք և վարույթ հասկացությունները սերտորեն փոխկապված են և չեն կարող գոյություն ունենալ միմյանցից անկախ, բացի այդ, դրանք միևնույն երևույթի դրսևորման ձևեր են, որոնք հարաբերակցվում են ինչպես մասը և ամբողջը, ուստի նպատակահարմար է սնանկության իրավունք եզրույթը դիտարկել որպես իրավունքի համակարգի քննարկվող տարրի ընդհանրական բնորոշում և տարբերակել դրա նյութական և վարութային բնույթի նորմերի իրավական բնույթը՝ այդպիսով առավել համակարգային և կանոնակարգված դարձնելով իրավունքը և դրա համակարգը։ Նյութաիրավական և վարութային նորմերի իրավաբանական բնույթի հաշվառմամբ անհրաժեշտ է իրավունքի հասկացությունը ձևակերպելիս ընդգծել իրավունքի նորմերով կարգավորվող և վարույթի շրջանակներում գործող հարաբերությունների նաև արտադատական կողմը, ինչը հատկապես կարգավորվում է իրավունքի նյութական նորմերով և ունի էական նշանակություն վարույթի շրջանակներում առաջացող դատավարական հարաբերությունների բնականոն ընթացքի ապահովման վրա, քանի որ առանց արտադատական ընթացակարգերի կիրառման սնանկության վարույթը խիստ թերի, իսկ դրա բուն նպատակները անիրագործելի կլինեին։

Իսկ Ս. Վ. Տելյուկինան, տալով մրցութային իրավունքի հասկացությունը, հատկապես ընդգծել է կարգավորվող հարաբերությունների նյութաիրավական կողմը. ըստ նրա՝ մրցութային իրավունքը ուսմունք է պարտապանի անվճարունակության (սնանկության) մասին, նորմերի համակարգ է, որը կարգավորում է այն պարտապանների իրավունքներն ու պարտականությունները, ովքեր, գույքի անբավարարությամբ պայմանավորված, չեն կատարում պարտավորությունները պարտատերերի և երրորդ անձանց նկատմամբ²։

Հետևաբար, սնանկության իրավունքը դատարան ներկայացվող սնանկության (նաև վտանգի) դիմումի քննությանը, արտադատական մեխանիզմներով վարույթի պատշաճ ընթացքի ապահովմանը և գործի քննությամբ որոշումների կայացմանն ուղղված՝ դատարանի և վարույթի մասնակիցների գործողությունների և դրանց հետևանքով առաջացող հարաբերությունների համակցություն է, որ կարգավորվում է սնանկության իրավունքի նորմերով և ամբողջացնում կոնկրետ սնանկության գործով դատական և արտադատական գործունեության սահմանները։

Իսկ սնանկության գործ ասվածը կարելի է բնորոշել որպես իրավական խնդիր, որը ծագել է սնանկության և քաղաքացիական, երբեմն միաժամանակ նաև ընտանեկան, աշխատանքային, հողային, հարկային կամ վարչական իրավունքով կարգավորվող հարցերի շուրջ, ինչն առնչվում է պարտապանի առկա վճարային պարտավորությունների չկատարմանը, դրանց կատարման համար գույքի անբավարարությանը, պարտապանի մոտ սնանկության հատկանիշների առկայությանը, վերջինիս դեմ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջի ներկայացմանը, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարման համար հնարավոր եղանակներից (պարտապանի լուծարում, ֆինանսական առողջացում) որևէ մեկի ընտրությանը, և պահանջում է օրենքով սահմանված ընթացակարգով լուծում դրա իրավասությունն ունեցող պետական մարմնի կողմից։ Ըստ էության, Օրենքում օգտագործվող «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական բու-

¹ Տե՛ս Попондопуло В.Ф. Конкурсное право, М., 2001, էջ 34։

² Տե՛ս Телюкина М. В. Основы конкурсного права, Волтерс Клувер, М., 2004, էջ 60։

վանդակությունը բացահայտելիս ՀՀ սահմանադրական դատարանը համանման եզրահանգման է եկել¹:

Սնանկության իրավունքի կարգավորման առարկան. Անդրադառնալով սնանկության իրավունքի առարկային՝ նախ և առաջ անհրաժեշտ է բացահայտել սնանկության իրավահարաբերությունները կարգավորող նորմերի բնույթը: Վերջինս պայմանավորված է սնանկության հարաբերությունների՝ իրավունքի նորմերով կարգավորվելու արդյունքում իրավահարաբերության «կարգավիճակ ստանալու» հանգամանքով:

Սնանկության իրավունքը կարգավորող իրավունքի նորմերին բնորոշ է հանրային և մասնավոր, ինչպես նաև նյութական և վարույթային բնույթը: Այսպես, **հանրային իրավունքն** առնչվում է իրավունքի այն հատվածին, որն ուղղակիորեն կապված է պետությանն ու դրա ուժային գործունեությանը: Իրավունքը հանրային-իրավական համարելու համար պետք է հաշվի առնել մի շարք չափանիշներ՝ 1) կենտրոնացվածությունը հասարակությունում, 2) կարգապահության մակարդակը, և 3) աստիճանակարգությունը: Ստացվում է, որ իրավունքը դրսևորվում է պետական իշխանության գործունեությանն իրավական բնույթ տալով, ինչն արտահայտվում է պետական վերահսկողությամբ՝ շեշտ դնելով իրավունքի սահմանափակումների, անձանց համար պարտականությունների առաջացման վրա և այլն: Իսկ **մասնավոր իրավունքն** արտահայտվում է ապակենտրոնացմամբ, առանձին սուբյեկտներին ազատության տրամադրմամբ: Տարբերությունը հանրային իրավունքից այն է, որ սուբյեկտները կարող են որոշումներ կայացնել առանց նախապես ծրագրավորված և տիպային կանոնների՝ փոխարենը ղեկավարվել սեփական կամքով, լինելով ինքնավար²:

Իսկ սնանկության իրավահարաբերություններն աչքի են ընկնում բարդ և բազմաշերտ բովանդակայնությամբ, քանի որ կարգավորվում են մասնավոր իրավունքի (օրինակ՝ պարտապանի և պարտատերերի, կամ սնանկության գործով կառավարչի և պարտատերերի միջև գոյություն ունեցող իրավահարաբերությունները), և հանրային իրավունքի (օրինակ՝ դատարանի և սնանկության վարույթի մասնակիցների միջև իրավահարաբերությունները) նորմերով: Իրավունքը կարգավորող նորմերը հստակ սահմաններ են առաջ բերում վարույթային գործողությունների կատարման համար, և դատարանի դերը մեծ է այդ գործընթացում, իսկ մասնավոր-իրավական բնույթն արտահայտվում է կողմերի տնօրինչական գործողությունների կատարման հնարավորության ընձեռմամբ, արտադատական ընթացակարգերի նախատեսմամբ:

Ինչ վերաբերում է սնանկության իրավունքի նորմերի նյութական և դատավարական բնույթին, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք միախառնված են, քանի որ Օրենքը կարգավորում է ինչպես վարույթի առանձնահատկություններին առնչվող, այսինքն՝ դատավարական իրավահարաբերություններ, այնպես էլ՝ դրանից դուրս կարգավորվող իրավահարաբերությունները, այսինքն՝ նյութական, որոնք առնչվում են պարտատերերի ժողովի (խորհրդի) լիազորություններին և գործունեության կարգին, կառավարչի կարգավիճակին և լիազորություններին, պարտատերերի պահանջների բավարարման հերթականության սահմանմանը, ֆինանսական առողջացման ծրագրի շրջանակներում թույլատրելի միջոցառումներին և այլն:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-932 գործով 11.01.2011 թվականի որոշումը:

² Տե՛ս **Алексеев С. С.** Право. Азбука. Теория. Философия. Опыт комплексного исследования, М., 1999, էջ 68:

<https://privlaw.ru/upload/iblock/584/m9xo0gdy6cd9eh4tbi5omm22s3pp57lq.pdf> (վերջին մուտք՝ 23.09.2024):

Սնանկության իրավաբանական բնույթի վերաբերյալ առկա են երկու տեսություններ. ըստ օբյեկտային տեսության՝ այն հիմնվում է պարտապանի գույքային դրության վրա՝ նրան հնարավորություն չտալով իր պարտատերերի նկատմամբ կատարել պարտավորությունները¹, սակայն ըստ սուբյեկտային տեսության՝ անվճարունակությունը (սնանկությունը) պարտապանի հատուկ վիճակ է, երբ նա ի վիճակի չէ մարել իր պարտքերը²: Վերոնշյալի համատեքստում ավելորդ չէ շեշտել, որ սնանկության իրավունքի կարգավորման առարկան ինքնատիպ է, քանի որ միաժամանակ կարգավորում է գույքային բնույթի հասարակական հարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման նյութաիրավական և վարույթային կողմերը, որոնք նյութաիրավական տեսանկյունից դասական իմաստով չեն նույնանում քաղաքացիական, վարչական, հարկային կամ հողային իրավունքում օգտագործվող դրանք բովանդակությամբ, բացի դա՝ գործի քննությամբ հաստատվում է սնանկ ճանաչվող անձի վերաբերյալ իրավաբանական փաստ, ինչը նրա իրավական կարգավիճակի մաս է դառնալու:

Նկատի ունենալով, որ մեծամասամբ քննարկվում է սնանկության իրավունքի՝ քաղաքացիական իրավունքի ինստիտուտ լինելու հանգամանքը, հարկ է բացահայտել վերջինիս կարգավորման առարկան՝ միաժամանակ ընդգծելով դրա և սնանկության իրավունքի առարկաների կարգավորման հիմքում ընկած տարբերություններն ու ընդհանրությունները: Այսպես, քաղաքացիական իրավունքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առնչվում են որոշակի անձանց գույքային շահերին, այսինքն՝ սեփականությանը, գույքային շահի փոխանակմանը, ժառանգությամբ սեփականության փոխանցմանը և մտավոր գործունեության արդյունքներին³:

Իսկ սնանկության իրավունքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առնչվում են անձի մոտ սնանկության հատկանիշների առկայությամբ պայմանավորված իրավաբանական փաստի հաստատմանը, ինչպես նաև վարույթին արհեստավարժ մարմին ներգրավելու պայմաններում անձին ֆինանսապես առողջացնելուն կամ տնտեսական շրջանառությունից դուրս մղելուն՝ պայմանավորված վճարային պարտավորության առկայությամբ, դրա ոչ պատշաճ կատարմամբ, ինչպես նաև գույքի անբավարարությամբ:

Վերոնշյալ իրավական կատեգորիաների միջև առկա են հետևյալ տարբերությունները՝

1. Քաղաքացիաիրավական բնույթի իրավունքների ծագման հիմքերը թվարկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում⁴, և դրանք են այն իրավաբանական փաստերը, որոնք առկայությամբ է պայմանավորվում քաղաքացիաիրավական հարաբերությունների գոյությունը, իսկ սնանկության իրավաբանական հարաբերությունների համակցության դեպքում, որոնք են.

1) որոշակի պայմանների առկայություն («Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածում թվարկված սնանկության հատկանիշներ⁵),

2) օրենքով սահմանված կարգով սնանկության վարույթի հարուցում,

¹ Տե՛ս Шершеневич Г. Ф. Учение о несостоятельности, Казань, 1890, էջ 75:

² Տե՛ս Пахаруков А. А. Правовое регулирование конкурсного производства юридических лиц (вопросы теории и практики): Дис. ... канд. юрид. наук. Иркутск, 2007, էջ 57–60:

³ Տե՛ս Гражданское право: Учебник. В 2 т. / Под ред. Б. М. Гонгало. Т. 1. 2-е изд. Перераб. и доп., М., Статут, 2017, էջ 41:

⁴ ՀՕ-239, ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50), ընդունվել է 05 մայիսի 1998թ., ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999թ.:

⁵ ՀՀ ՊՏ 2007.01.31/7, ընդունվել է 25 դեկտեմբերի 2006 թվականին, ուժի մեջ է մտել 10 փետրվարի 2007 թվականին:

3) օրենքով սահմանված կարգով անձին սնանկ ճանաչելը,
 4) վարույթի շրջանակներում պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելը,
 5) ներկայացված պահանջների բավարարման համար հատուկ կարգ սահմանելը¹:

2. Քաղաքացիական իրավունքում հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմնական հանգամանքը գույքային շահի (կամ անձնական ոչ գույքային շահի, ինչն այնուամենայնիվ կարող է ունենալ գույքային դրսևորում) և դրա հնարավոր դրսևորումների առկայությունը կամ բացակայությունն է, այսինքն՝ դրա օբյեկտը գույքային շահն է: Սնանկության իրավունքի օբյեկտը ևս գույքային շահն է, սակայն անձի գույքային իրավունքների տնօրինումը կատարվում է միմիայն պարտատերերի բազմաթիվության, հարկադիր կատարման վարույթում պարտավորության առարկայի վրա բռնագանձման տարածման անհնարինության պայմաններում և տնտեսական շրջանառությունը «բեռնաթափելու» կամ ֆինանսապես «տկար» սուբյեկտին շրջանառություն հետ բերելու հնարավորության ընձեռնման նպատակով:

3. Սնանկությունը սուբյեկտի համար իր բնականոն գործունեության խաթարման հետևանքն է, ինչի կարգավորումը ոչ թե շաղկապվում է միայն քաղաքացիական իրավունքի նորմերին, այլ իր նպատակներով և վարույթային բնույթով առանձնանում և առաջ է բերում էապես տարբերվող հետևանքներ, ինչը բնորոշվում է նաև որպես սուբյեկտի իրավական կարգավիճակի հատկանիշ:

4. Սնանկության իրավունքն ունի կատարողական վարույթին բնորոշ տարրեր, քանզի մեծաթիվ դեպքերում նախաձեռնվում է հարկադիր կատարման վարույթում պարտավորության առարկայի վրա բռնագանձման տարածման անհնարինության պայմաններում², և սնանկության վարույթի մասնագիտացված բնույթը, ինչպես նաև գույքի հայտնաբերման և իրացման համար նախատեսված գործիքակազմի առկայությունը լրացուցիչ նախադրյալներ են ստեղծում պարտավորությունների կատարման համար: Վերոշարադրյալը հիմնականում կիրառվում է այն պայմաններում, երբ քաղաքացիական կամ դրա ենթաձուլ համարվող գործարարական իրավունքով կարգավորվող նորմերով լուծված վեճի արդյունքում կայացված դատական ակտն ըստ էության անկատար է մնում: Ստացվում է, որ սնանկությունը անձի գույքային կամ պարտավորական իրավունքների շուրջ ծագած վեճի, դրանց արդյունքում առկա պարտավորությունների չկատարման, սուբյեկտի մոտ սնանկության հատկանիշների առկայությամբ նախաձեռնված վարույթ է, ինչը հաջորդում է քաղաքացիական (կամ գործարարական) իրավունքի նորմերով կարգավորվող իրավահարաբերություններին:

5. Սնանկության իրավունքը կարգավորում է միասեռ հասարակական հարաբերություններ, ինչը ՀՀ-ում կարգավորվում է միասնական օրենսդրական ակտով՝ Օրենքով և հարակից օրենքով³: Օրենքը բաղկացած է 107 հոդվածներից, որոնք կարգավորում են վարույթի ընդհանուր հիմունքները, սնանկության վարույթի մասնակիցների իրավական կարգավիճակը, պարտատերերի պահանջների հաստատման և բավարարման կարգը, սնանկության վտանգի, ֆինանսական առողջացման

¹ Տե՛ս **Карелина С. А.** Механизм правового регулирования отношений несостоятельности, Москва, 2008, էջ 207:

² Տե՛ս **Ղատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի** (ընդունվել է 05 մայիսի 1998 թվականի, ուժի մեջ է մտել 01 հունվարի 1999 թվականին, ՀՕ-221, ՀՀՊՏ 1998.06.15/12(45)) 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

³ Տե՛ս **Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին ՀՀ օրենքը** (ընդունվել է 06 նոյեմբերի 2001 թվականի, ուժի մեջ է մտել 15 դեկտեմբերի 2001 թվականին, ՀՕ-262, ՀՀՊՏ 2001.12.15/40(172)):

ծրագրի, իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթների և սնանկության վարույթի ավարտին առնչվող հարցերը և այլն: Օրենքի վերոնշյալ կառուցվածքային մասերը կարգավորում են վարույթի՝ միմյանցից որոշակի չափով անկախ և տարբեր փուլեր, որոնցից յուրաքանչյուրն ընթանում է Օրենքով սահմանված ընթացակարգով: Ընդ որում, սնանկության վարույթի փուլային շարունակականությունը պայմանավորված է սնանկության գործերի առանձնահատկություններով՝ յուրաքանչյուր փուլին տրամաբանորեն հաջորդում է մյուս փուլը, միևնույն ժամանակ կան փուլեր, որոնցից ոչ բոլորն են պարտադիր:

Ինչ վերաբերում է քաղաքացիական և սնանկության իրավունքների ընդհանրությանը, ապա այն հիմնականում դրսևորվում է պարտավորությունների պատշաճ կատարմանը, վերջինիս ապահովմանը և պարտատերերի բազմաթիվության պարագայում առկա դրամական միջոցների բաշխման հերթականության որոշմանը: Սակայն սնանկության իրավունքի նորմերը քաղաքացիական իրավունքի նորմերի նկատմամբ դիտվում են որպես հատուկ նորմեր, և վեճի բնության ընթացքում դատարանը ղեկավարվում է *lex specialis derogat legi generali* հայտնի սկզբունքով¹ «առաջնայնություն» տալով սնանկության իրավունքի նորմերին:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ ստացվում է, որ սնանկության իրավունքի որոշ նորմեր քաղաքացիական իրավունքի արտահայտման մասնավոր դեպքեր են, որոնք վերջինիցս ունեն ընդգծված տարբերություններ: Դա պայմանավորված է սնանկության իրավունքի նորմերի համալիր բնությով, քանզի սնանկության իրավահարաբերությունների կարգավորման հարցում առանձնահատուկ տեղ ունեն նաև վարույթային նորմերը և հարաբերությունները:

Ինչ վերաբերում է քաղաքացիական դատավարության և սնանկության իրավունքների միջև առկա կապին, ապա ավելորդ չէ նշել, որ այն բավականին սերտ է: Այսպես, քաղաքացիական դատավարությունը վարույթային իրավահարաբերությունների ամբողջություն է, որն առաջանում է դատարանի և վարույթի մյուս մասնակիցների միջև դատարանի կողմից քաղաքացիական գործերով (լայն իմաստով) արդարադատություն (գործի բնություն և վեճի լուծում) իրականացնելիս²: Ավելորդ չէ նշել, որ սնանկության և քաղաքացիական դատավարության իրավունքների հասկացություններում և բովանդակություններում կան էական ընդհանրություններ՝ պայմանավորված վարույթների շրջանակում արդարադատության իրականացմամբ: Ընդ որում, եթե քննարկելու լինենք միայն սնանկության վարույթում առաջացող դատավարական հարաբերությունները և դրանք կարգավորող նորմերը, ապա կարող ենք նշել, որ սնանկության իրավունքը քաղաքացիական դատավարության իրավունքի ենթաձևեր է, քանզի սնանկության վարույթում գործող բոլոր ընթացակարգային հարաբերությունների հիմքում ընկած են քաղաքացիական դատավարության տրամաբանությունը և կարգավորումները, ինչի մասին վկայում է նաև Օրենքի 1-ին հոդվածը: Իհարկե սնանկությունն ունի իր ընթացակարգային կարգավորման առանձնահատկությունները՝ պայմանավորված վարույթի նպատակներով, սակայն դրանք այնուամենայնիվ բխում են քաղաքացիական դատավարության կարգավորման ձևից: Բացի այդ, եթե սնանկության գործով կառավարչի իրավական կարգավիճակին և գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական առողջացման ծրագրի

¹ Իրավունքի տեսությանը հայտնի «հատուկ նորմը դուրս է մղում ընդհանուր նորմին» սկզբունքը տեղ է գտել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում:

² См. Гражданское процессуальное право: Учебник: [в 2 т.] / под ред. П. В. Крашенинникова. – 2-е изд., перераб. и доп. – Москва: Статут, 2022, էջ 33:
https://www.consultant.ru/edu/student/download_books/book/grazhdanskoe_processualnoe_pravo_uchebnik_v_2_t_tom_1_obshchaya_chast_pod_red_pv_krashenninnikova/ (վերջին մուտք՝ 23.09.2024):

կարգավորմանն ուղղված իրավական նորմերի ամբողջությունը դիտարկենք որպես սնանկության իրավունքի ինստիտուտներ, ապա կարող ենք արձանագրել, որ ենթաձյուղի մաս կազմող ինստիտուտներն իրենց հերթին նեղ մասնագիտացված և տարբերակված են: Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք նշել, որ սնանկության իրավունքի ընթացակարգային նորմերի իրավական բնույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն համապատասխանում է իրավունքի ենթաձյուղին համապատասխանող պահանջներին, քանի որ ունի հատուկ, միաժամանակ տարբերակված կարգավորվածություն և նեղ մասնագիտացված բնույթ, հետևաբար սնանկության իրավունքի *ընթացակարգային նորմերի* ամբողջությունը կարելի է համարել քաղաքացիական դատավարության իրավունքի ենթաձյուղ:

Սնանկության իրավունքի կարգավորման մեթոդը. Սնանկության իրավունքի իրավական կարգավորման մեթոդը իմպերատիվ-դիսպոզիտիվ և, այլ խոսքով՝ թույլատվական հրամայականը: Այս եզրահանգմանը գալիս ենք՝ վերլուծելով **1)** դրա մասնակիցների իրավունքների ու պարտականությունների բնույթը, ինչպես նաև **2)** իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի համակցությունը և **3)** իրավական սանկցիաների, դրանց կիրառման եղանակների և ընթացակարգերի բնույթը¹:

1) Սնանկության վարույթի շրջանակներում վարույթի ընթացքի վրա էական ազդող որոշումներ կայացնում է դատարանը՝ որպես սնանկության գործը վարող, ինչպես նաև պարտատերը կամ պարտատերերի ժողովը (խորհուրդը) և սնանկության կառավարիչը: Դատարանը, հանդես գալով պետության անունից, պարտականություն ունի ապահովել Օրենքով սահմանված պահանջների պահպանումը, ինչպես նաև ստուգել պարտատերերի կամ սնանկության գործով կառավարչի կայացրած որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ներկայիս իրավակարգավորման պայմաններում Դատարանը ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք)² և Օրենքով նախատեսված նորմերով և հետևում է դրանց խիստ պահպանմանը: Դատարանի գործունեության սահմանները բնութագրվում են **no procedat iudex ex officio** սկզբունքով, ինչը քաղաքացիադատավարական հարաբերությունների կարգավորմանը բնորոշ սկզբունք է, որպիսի պայմաններում էլ առավել տեսանելի է դառնում իրավունքի մեթոդի իմպերատիվ, հրամայական բնույթը:

Պարտատիրոջ կամ պարտատերերի ժողովի (խորհրդի) կայացրած որոշումներից են մինչև պարտապանին սնանկ ձանաչելը հաշտության համաձայնություն կնքելը կամ սնանկության դիմումը հետ վերցնելը, սնանկ ձանաչելուց հետո ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելը, պարտատերերի կողմից իրենց ներկայացված պահանջներից հրաժարվելը: Վերջիններս տնօրինչական գործողություններ են, որոնք աչքի են ընկնում իրենց թույլատվական բնույթով, այսինքն՝ այս պարագայում վարույթի մասնակիցները, ղեկավարվելով սեփական կամքով, որոշում են կայացնում իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

² "Legal Definition of FAIR TRIAL". www.merriam-webster.com. Retrieved 2022-01-05. Doswald-Beck, Louise. Fair Trial, Right to, International Protection, *Max Planck Encyclopedia of Public International Law*. Doebbler, Curtis (2006). Introduction to International Human Rights Law. CD Publishing. p. 108. ISBN 978-0-9743570-2-7. Alfredsson, Gudmundur; Eide, Asbjorn (1999). The Universal Declaration of Human Rights: a common standard of achievement. Martinus Nijhoff Publishers. p. 225. ISBN 978-90-411-1168-5. Doebbler, Curtis (2006). Introduction to International Human Rights Law. CD Publishing. p. 107. ISBN 978-0-9743570-2-7. Lemmens, P. (2014). The right to a fair trial and its multiple manifestations. In E. Brems & J. Gerards (Eds.), *Shaping Rights in the ECHR: The Role of the European Court of Human Rights in Determining the Scope of Human Rights* pages 294-314. Cambridge Books Online: Cambridge University Press. D. Vitkauskas, G. Dikov Protecting the Right to a Fair Trial under the European Convention on Human Rights. A Handbook for Legal Practitioners. 2nd Edition, prepared by Dovydas Vitkauskas Strasbourg, Council of Europe, 2017. N. Mole, C. Harby The right to a fair trial. A guide to the implementation of Article 6 of the European Convention on Human Rights Strasbourg, Council of Europe, 2006. R. Goss Criminal Fair Trial Rights: Article 6 of the European Convention on Human Rights Archived 2016-03-06 at the Wayback Machine Portland/Oxford: Hart, 2014

³ "Trial". *Department of Justice*. Retrieved 17 May 2020. Arenella, Peter (February 1980). "Reforming the Federal Grand Jury and the State Preliminary Hearing to Prevent Conviction without Adjudication". *Michigan Law Review*. **78** (4): pages 463–585. doi:10.2307/1288187. JSTOR 1288187.

⁴ Руководитель авторского коллектива и редактор Г.С. Казинян, Уголовный процесс Республики Армения, учебник для вузов, издательство ЕГУ, Yerevan, 2015, page 284.

The development of a general theoretical approach to defining the essence and content of preliminary hearings in the criminal procedure of Armenia also impacts the effectiveness of this area of judicial activity and, consequently, ensures constitutional rights in criminal proceedings and achieves the intended objectives.

The scientific doctrine dedicates significant attention to the optimal procedural form for preparing criminal cases for trial.¹ Numerous procedural scholars throughout history have made substantial contributions to studying the problems and features of the preliminary hearing stage.

Currently, theoretical debates in procedural science continue regarding the nature of court activities within the scope of preliminary hearings. The lack of a unified theoretical foundation in defining the essence of this institution leads to a lack of consensus within the science of criminal procedure regarding its concept, significance, essence, and operating principles.

2. HISTORICAL DEVELOPMENT AND PREVIOUS REGULATIONS INSTEAD OF PRELIMINARY HEARINGS IN THE CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Before the introduction of the new Criminal Procedure Code in Armenia on July 1, 2022, the previous legislation included the concept of preparing a criminal case for trial.² This stage acted as a transitional phase between the completion of the investigation and the beginning of the trial. Although this procedural link was within the court's jurisdiction, it was limited in its scope, particularly in terms of the issues that could be addressed at this stage.

The practical side of this phase of trial preparation, defined by previous legislation, often proved constrained. This was not only due to judges being overburdened and unable to fully review the case materials prior to this preparatory stage but also because it covered a narrow range of issues that could be discussed.

It is important to note that, given the limited resources of the Armenian judicial system, especially when handling major or sophisticated criminal cases, the preparatory stage often became a mere formality. Judges did not always have the opportunity to give due attention to every aspect of a criminal case, which, in turn, affected the quality of procedural decisions made during the preparation phase.

Under the previous legislation, once a criminal case was submitted to the court, it was expected that within 15 days, the court would make a formal decision: to forward the case for trial, suspend the process, transfer it to the appropriate judicial authority,

¹ Белкин А. Р. УПК РФ: конструктивная критика и возможные улучшения. Часть XII. Подготовка к судебному заседанию. Общие условия судебного разбирательства. Москва : РТУ (МИРЭА), 2018, page 41 . Рябинина Т. К. Реализация судебной власти на стадии подготовки уголовного дела к судебному заседанию: теория и правоприменение : специальность 12.00.09 «Уголовный процесс» : дис. ... д-ра юрид. наук. Саратов, 2021, page 545. Курс уголовного процесса / А. А. Арутюнян, Л. В. Брусницын, О. Л. Васильев [и др.] ; под ред. Л. В. Головки. 2-е изд., испр. Москва : Статут, 2017, 1280 с. 3. Уголовно-процессуальное право Российской Федерации : учебник / Л. А. Воскобитова, Т. С. Дворянкина, Н. М. Кипнис ; отв. ред. П. А. Лупинская. 2-е изд., перераб. и доп. Москва : Норма, 2009, 1072 с. 6. Червоткин А. С. Промежуточные судебные решения и порядок их пересмотра в российском уголовном процессе : специальность 12.00.09 «Уголовный процесс» : дис. ... канд. юрид. наук. Москва, 2013. 204 с. Трефилов А. А. Уголовный процесс зарубежных стран. Т. 1. Уголовный процесс Швейцарии. Moscow, 2016, page 1012.

² Criminal Procedure Code of the Republic of Armenia, 01.09.1998, ՀՕ-248, article 292.

or take similar technical measures.¹ This process was conducted without hearings or the participation of the parties, which naturally reduced the level of openness and transparency in decision-making.

Thus, the previous system for preparing criminal cases for trial in Armenia had its limitations and drawbacks, particularly in the context of efficiency and adherence to procedural fairness. With the introduction of the new Criminal Procedure Code in 2022, an attempt was made to improve this process by expanding the capabilities of judicial preparation and ensuring a more thorough and objective review of criminal cases before transitioning to trial. The absence of preliminary hearings in criminal proceedings restricted the rights of the accused, particularly the right to defense and the principle of adversarial proceedings.²

3. DEVELOPMENT AND CONCEPT OF PRELIMINARY HEARINGS IN THE REPUBLIC OF ARMENIA

In light of global trends in modernizing criminal justice systems, preliminary hearings have become an integral part of reforms in many countries. The approach to preliminary hearings in Armenia is closely aligned with international standards of justice. The introduction of this stage into Armenia's criminal process opens a new chapter aimed, among other things, at protecting the rights of the accused. This innovative tool serves as a separate stage where key issues, such as the admissibility of evidence, can be discussed, providing the defense with an opportunity to prepare more thoroughly for trial and effectively represent the interests of their client.

This distinct stage of criminal proceedings establishes a framework for critically reviewing the collected evidence and ensuring its more precise and objective use during the trial. This marks a long-awaited enhancement of the safeguards for the rights of the defense, thereby contributing to a fairer and more effective criminal process.

In terms of timeliness, preliminary hearings in Armenian criminal proceedings face several challenges and issues. One of the main difficulties is the lack of established rules and standards governing this procedural stage. This, in turn, creates uncertainty and additional difficulties for the defense, prosecution, and court in applying the new norms.

A fundamental question that requires attention and examination is understanding the true essence of preliminary hearings. What are they, in essence, for the Armenian legal system? What goals do they pursue, and how do they contribute to a fairer and more efficient criminal justice system?

One of the primary aspects that make preliminary hearings a long-awaited tool for protecting human rights is the opportunity for early access to information and evidence. This stage allows the defense to actively participate in case preparation, having access to evidence at the early stages.³ This proactive approach can be a key factor in creating a more balanced and well-grounded judicial process.

In legal systems lacking clear preliminary hearings, defendants could face challenges in preparing their defense. The absence of structured preliminary hearings could limit their ability to challenge evidence, address legal issues, or raise procedural

¹ Criminal Procedure Code of the Republic of Armenia, 01.09.1998, <O-248, article 292.

² Глазкова, М.Е. Применение европейских стандартов отправления правосудия в российском арбитражном процессе: монография. М.: Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве РФ, Ankil, 2012, page 70.

³ Лупинская П.А. Решения в уголовном судопроизводстве: теория, законодательство, практика., Moscow, 2010, page 60.

objections.¹ This could potentially lead to unfair trials and undermine the overall integrity of the legal system.²

Considering that pretrial proceedings are not entirely adversarial, the defense is often left with insufficient opportunities to fully exercise their rights during the trial. It is important to recognize that an adversarial process is not merely a formal opportunity to present one's viewpoint on the case, but primarily it should be substantive.

According to Article 311 of the Criminal Procedure Code of Armenia, preliminary hearings address a number of key issues, encompassing both substantial and technical aspects of a criminal case. The range of these issues represents a broad spectrum of questions reviewed at this stage of the process.³

Firstly, preliminary hearings include the consideration of early termination of proceedings, objections, justified recusals, or exemptions from participation in the process. Secondly, preliminary hearings address the issue of referring case materials to the competent court.

The third aspect includes the matter of ending criminal prosecution or concluding the process. This is an important point, ensuring that cases can be resolved while respecting the rights and interests of all parties. Furthermore, preliminary hearings consider the issue of choosing measures of restraint for the defendant.

This stage also covers mediation and the application of special proceedings within the framework of conciliation processes, expedited procedures, or cooperation. A significant part of preliminary hearings is the review of the scope of evidence and its admissibility.

Additional findings from the information provided highlight the variety and importance of issues reviewed during preliminary hearings. Let's examine some additional aspects:

- Article 311 of the Criminal Procedure Code of Armenia defines a range of categories of issues considered during preliminary hearings, from formal and procedural aspects, such as recusals and participation in the process, to substantial issues, like the sufficiency of evidence or termination of prosecution. Thus, the stage of preliminary hearings encompasses a broad spectrum of aspects of a criminal case.

- The process of preliminary hearings aims to ensure fairness and protect the rights of all parties involved in the criminal process. This includes ensuring effective participation and the opportunity for parties to express their views on various procedural matters.

- One of the primary focuses of preliminary hearings is ensuring procedural fairness. This includes transferring the case to the appropriate court, applying measures of restraint, addressing mediation issues, and adhering to procedural norms.

- It is important to note that at this stage, not only substantial issues related to the factual side of the criminal case are considered, but also formal and procedural aspects. This underscores the importance of observing procedural norms to ensure a fair and lawful criminal process.

¹ Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / О. Н. Ведерникова, С. А. Ворожцов, В. А. Давыдов и др. ; editor. В. М. Лебедев ; Верховный Суд РФ. - Moscow. : Норма : Инфра-М, 2014, page 104.

² Мотивированность судебных решений в свете стандартов Европейского Суда по правам человека / А. А. Васяев, Г. И. Курдюков, С. А. Князькин // Российский юридический журнал : науч.-теорет. и информ.-практ. журн. 2014, N 6, page 2.

³ Criminal Procedure Code of the Republic of Armenia, 01.09.1998, ՀՕ-248, article 311.

- Preliminary hearings serve as a mechanism to maintain balance between the interests of the prosecution and the defense. Addressing issues such as the scope and admissibility of evidence helps create a balanced and fair trial process.
- It is noted that even if a case is concluded at the preliminary stage, it is usually related to procedural issues, highlighting the importance of effective and competent consideration of criminal cases from the very start of the process.

4. CONCLUSION

Preliminary hearings, as a key stage in the criminal process, have gained special significance in the modern legal system. Throughout our discussion, their importance as a tool for ensuring fairness and efficiency in criminal proceedings was highlighted. Significant attention was given to analyzing relevant literature, where preliminary hearings, taking their place in the context of transitioning from the investigation stage to trial, are considered an integral part of the procedural system.

The importance of preliminary hearings encompasses not only the technical aspects of a criminal case but also fundamental questions concerning the essence of the charges and the scope of the presented evidence. Beyond formal procedural issues, preliminary hearings play a key role in ensuring equality between the parties, allowing the defense more detailed engagement with the prosecution.

As previously noted, preliminary hearings act as a kind of transitional link between the pretrial and trial stages. This stage not only ensures the formal approval of charges but also serves as a fundamental moment that sets the further course of judicial proceedings.

One of the key points emphasized in the review of preliminary hearings is their role in ensuring equality. A judicial system based on the principle of adversarial proceedings provides both parties with an equal opportunity to present their arguments and evidence. In this context, the ability of the defense to question the clarity and specifics of the charges becomes an essential part of maintaining this principle within the trial process.

However, despite a deep analysis of individual aspects presented in subsequent studies, this general overview of preliminary hearings within Armenia's criminal justice system will serve as a summary conclusion on the new concept. This review will provide readers with a general understanding of the role and importance of preliminary hearings in the context of criminal proceedings, while future articles will delve into specific aspects, integrating them into modern legal practice in Armenia.

Implementing improvements to the preliminary hearing process in Armenian criminal justice entails considering both procedural and substantive aspects to ensure fairness, efficiency, and the protection of the rights of all parties. The following recommendations are proposed for the purposes outlined above:

1. Strengthen legislative provisions emphasizing the right of the accused to a clear and detailed presentation of the charges during preliminary hearings.
2. Enhance rules that guarantee active and meaningful participation of the defense during preliminary hearings, allowing them to challenge evidence, contest its admissibility, and raise procedural objections.
3. Emphasize the adversarial nature of preliminary hearings, fostering an environment where the prosecution and defense can present their arguments and evidence on equal terms, with the active involvement of the judge as a guarantor of the adversarial process.
4. Given the relatively new nature of the legislative provisions in the Armenian Criminal Procedure Code, attention must be focused on training and preparation.

Ensuring extensive training programs for lawyers involved in preliminary hearings is a fundamental step toward unifying judicial practice and creating commonly accepted approaches to addressing issues raised during the preliminary hearing stage. Since these provisions are only beginning to be implemented, training plays a crucial role in establishing a unified standard for preliminary hearing procedures and preparing lawyers for the successful application of new norms in practice.

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լուսինե Հովհաննիսյան

*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան
lusine.hovhannisyan46@gmail.com
ORCID - 0009-0006-1789-2692*

Համառոտագիր: Քրեական արդարադատությունը ներառում է ընթացակարգերի բազմակողմանի համակարգ, որն ուղղված է անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորմանը, դատավարական կարգավորումների պահպանմանը և արդյունավետ արդարադատության իրականացման ապահովմանը: Նախնական դատական լսումների ներդրումը ՀՀ քրեական դատավարության համակարգում կարևոր փոփոխություն է իրավական դաշտում: Սույն հոդվածում քննարկվող օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեն բարձրացնել քրեական գործերի դատական քննության արդյունավետությունը և նպաստել դատավարության թափանցիկության բարձրացմանը: Նախնական դատալսումների ներառումը հնարավորություն է տալիս նվազեցնել գործերի քննության տևականությունը և որոշակիորեն վերացնել ընթացակարգային խոչընդոտները՝ ապահովելով գործերի ավելի արագ ընթացքը: Այս փոփոխությունը արտացոլում է բարեփոխումների և քրեական արդարադատության պրակտիկայի արդիականացման ընդհանուր հանձնառությունը՝ համապատասխանեցնելով այն միջազգային չափանիշներին:

Բանալի բառեր - Քրեական արդարադատություն; ընթացակարգային կարգավորումներ; նախնական դատալսումներ; ընթացակարգային ամբողջականություն; քրեական արդարադատության արդյունավետության բարձրացում; քրեադատավարական իրավական կարգավորումներ; մրցակցության սկզբունք:

ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ СЛУШАНИЯ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ЗНАЧЕНИЕ, ВЫЗОВЫ И ПЕРСПЕКТИВЫ РЕФОРМИРОВАНИЯ

Лусине Оганесян

*Аспирант кафедры уголовного процесса
и криминалистики ЕГУ, Член Палаты адвокатов Армении, адвокат,
lusine.hovhannisyan46@gmail.com
ORCID - 0009-0006-1789-2692*

Аннотация. Уголовное правосудие охватывает многоаспектную систему процедур, направленных на защиту прав личности, соблюдение процессуальных норм и обеспечение справедливости. Введение предварительных слушаний в уголовный процесс Армении знаменует значительное преобразование правовой системы. Эти последние законодательные изменения направлены на упрощение судебных процессов, повышение эффективности управления делами и содействие справедливости и прозрачности судебных разбирательств. Включение предварительных слушаний позволяет армянской правовой системе уменьшить задержки и устранить процессуальные препятствия, обеспечивая более быстрое рассмотрение дел при соблюдении принципов правосудия. Это изменение отражает более широкую приверженность реформам и модернизации практики уголовного правосудия в соответствии с международными стандартами. В целом, механизм предварительных слушаний свидетельствует о стремлении Армении укрепить свою правовую базу и повысить доверие к судебной системе за счет улучшения процессуальной целостности и справедливых результатов.

Ключевые слова - Уголовное правосудие; процессуальные стандарты; предварительные слушания; процессуальная целостность; повышение эффективности уголовного правосудия; уголовно-процессуальная правовая база; принцип состязательности.

ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ ԿՐՈՂ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ (ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ) ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՍՏԵՂԾԵԼԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Արման Բաբախանյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դասախոս,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական

arman.babakhanyan@ysu.am

ORCID - 0000-0001-9465-6016

Համառոտագիր: Օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 323-րդ հոդվածը նախատեսելով, կարծում ենք, նպատակ է հետապնդել ակտիվացնել գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչների դեմ մղվող քրեաիրավական պայքարը: Այնուամենայնիվ, օրենսդրի կողմից որդեգրած որոշ մոտեցումներ խնդրահարույց են և չեն նպաստում գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչների դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետության բարձրացմանը:

Այս համատեքստում աշխատանքի նպատակն է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և դա ստեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավակարգավորման համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հստակեցնել գողական աշխարհի հասկացությունը՝ առաջարկելով դրա խմբագրված տարբերակը, ինչպես նաև որոշել դա ստեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտությունը:

Արդյունքում հանգել ենք հետևության, որ գողական աշխարհ է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է գողական օրենքի վրա հիմնված վարքագծի կանոնների համաձայն, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ գողական աշխարհում ունեցած հեղինակության կամ բռնության, բռնություն գործադրելու սպառնալիքի, շանտաժի, հարկադրանքի այլ եղանակի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը: Բացի այդ, գտել ենք, որ բացակայում է գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր - քրեական ենթամշակույթ կրող խմբավորում; գողական աշխարհ; գողական օրենք; գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչներ; գողական աշխարհում ունեցած հեղինակություն; քրեական ենթամշակույթ կրող խմբավորման ստեղծում; գողական աշխարհի ստեղծում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի¹ (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) 323-րդ հոդվածում նախատեսված

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացությունը և գողական աշխարհի ստեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտությունը: Պետք է նշել, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) ներկայիս հասկացությունում առկա են որոշ խնդրահարույց ձևակերպումներ, ինչպես նաև վիճելի է դա ստեղծելը որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորում նախատեսելը:

Սույն հետազոտության նպատակն է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և դա ստեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավակարգավորման համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հստակեցնել քննարկվող հասկացությունը՝ առաջարկելով դրա խմբագրված տարբերակը, ինչպես նաև որոշել գողական աշխարհի ստեղծելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտությունը: Նշված նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության հատկանիշները, վեր հանել այդ հասկացությունում առկա խնդրահարույց ձևակերպումները՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան որոշ երկրների փորձը,
- ներկայացնել քննարկվող հասկացության հստակեցմանն ուղղված առաջարկներ,
- բացահայտել գողական աշխարհի ստեղծելու էությունը և քննարկել դրա համար քրեական պատասխանատվություն նախատեսելու անհրաժեշտությունը:

Աշխատանքում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ անալիզ, սինթեզ, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդներ:

2. ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՂ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ (ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ) ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու համար, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը տալիս է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հասկացությունը՝ սահմանելով, որ գործող Օրենսգրքի՝ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործությունները» գլխի իմաստով՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

Կարծում ենք՝ քննարկվող հանցակազմը նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել ակտիվացնել գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչների դեմ մղվող քրեաիրավական պայքարը:

Այնուամենայնիվ, քննարկվող հանցակազմը ձևակերպելիս օրենսդիրը կողմից որդեգրած որոշ մոտեցումներ խնդրահարույց են և չեն նպաստում գողական աշ-

խարհի ղեկավար կազմի ներկայացուցիչների դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետության բարձրացմանը:

Հարկ է նշել, որ թեև քննարկվող հոդվածի 3-րդ մասում նախատեսված հասկացությունն ընդհանուր առմամբ հաջողված է, այնուամենայնիվ դրանում առկա են որոշ խնդրահարույց ձևակերպումներ:

Նախ, օրենսդիրը քննարկվող հոդվածում միաժամանակ օգտագործում է «գողական աշխարհ» և «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» եզրույթները՝ դրանք դիտարկելով որպես հոմանիշներ:

Մինչդեռ գողական աշխարհը և քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը որպես համարժեք եզրույթներ դիտարկելը խնդրահարույց է, քանի որ «գողական աշխարհն իրենից ներկայացնում է «գողական օրենքով» («պրագմոնով») առաջնորդվող բոլոր անձանց միավորումը»¹, իսկ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը կարելի է մեկնաբանել որպես գողական աշխարհի շրջանակում գործող, առավել նեղ շրջանակի անձանց միավորում: Այսինքն՝ գողական աշխարհ և քրեական ենթամշակույթ կրող խմբավորում եզրույթները հարաբերակցվում են որպես ամբողջ և մաս:

Հետևաբար, գտնում ենք, որ օրենսդրի կողմից գողական աշխարհը և քրեական ենթամշակույթ կրող խմբավորումը նույնացնելը և այդ եզրույթները որպես հոմանիշներ օգտագործելն ընդունելի չեն:

Անդրադառնալով այն հարցին, թե գողական աշխարհ և քրեական ենթամշակույթ կրող խմբավորում եզրույթներից ո՞րը պետք է կիրառվի քննարկվող իրավանորմում, գտնում ենք, որ առավել նպատակահարմար է գողական աշխարհ եզրույթը:

Վերագրյալ հետևությունը պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ օրենսդիրն իրականում քննարկվող իրավանորմում նկատի է ունեցել ամբողջ գողական աշխարհը, այլ ոչ թե դրա բաղկացուցիչ մասերից՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումները: Այս մասին է վկայում գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված գողական աշխարհի հասկացության այն հատկանիշը, որ անձանց միավորումը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն: Պետք է նշել, որ վարքագծի կանոնները սահմանվում են ամբողջ գողական աշխարհի կամ առնվազն դրա մեծամասնության ղեկավար կազմի կողմից և ճանաչվում են ամբողջ գողական աշխարհի կամ առնվազն դրա մեծամասնության կողմից, այլ ոչ թե սահմանվում և ճանաչվում են գողական աշխարհի շրջանակում գործող, առավել նեղ շրջանակի անձանցից բաղկացած տարբեր խմբերի՝ քրեական ենթամշակույթ կրող տարբեր խմբավորումների կողմից:

Բացի այդ, իրավական որոշակիության տեսանկյունից «գողական աշխարհ» եզրույթն օգտագործելն ավելի ընդունելի է, քանի որ այն առավել ընկալելի է գողա-

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 22-րդ կետը, գանգատ թիվ 45554/08, (<https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ), ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի՝ 2020 թվականի գործունեության հաշվետվություն /ամենամյա/, Հայաստան, 2021, էջեր 80, 87 (<https://prisoninitiatives.am/reports/18277/> էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ), **Ն.Իսկանդարյան և այլ համահեղինակներ** Ոչ ֆորմալ հարաբերությունները Հայաստանի ազատագրվման վայրերում. Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկի օրինակով, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀՎ, 2017, էջ 8, (http://www.csi.am/sites/default/files/library/report_prison_subculture%20Arm.pdf էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ):

կան աշխարհի ներկայացուցիչների կողմից՝ ի համեմատ օրենսդրի կողմից ներմուծված «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» եզրույթի:

Հետևաբար, կարծում ենք, օրենսդիրը պետք է հրաժարվի «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում» եզրույթը օգտագործելուց:

Նման պայմաններում և հաշվի առնելով, որ գրական խոսքում բացակայում է «գողական աշխարհ» եզրույթի էությունը նույնությամբ արտահայտող եզրույթը, գտնում ենք, որ օրենսդրի կողմից առավել նպատակահարմար է հենց «գողական աշխարհ» եզրույթի կիրառումը:

Անդրադառնալով գողական աշխարհի հասկացության հատկանիշներին՝ հարկ է նախ նշել, որ այդպիսին են համարվում քրեական աստիճանակարգությունը ու միջանձնային հիերարխիկ հարաբերությունները, որոնց էությունը բացահայտված է իրավաբանական գրականության մեջ¹, ուստի դրանց կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Գողական աշխարհի հասկացության հաջորդ հատկանիշն իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն գործելն է, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին:

Այս առնչությամբ հարկ է նշել, որ «ներկայումս Հայաստանում գործում է գողական օրենք (պռագոն), որը տարբերվում է խորհրդային նախատիպից թե՛ էթիկական սկզբունքներով, թե՛ հիերարխիայի կառուցվածքով, թե՛ դրա աջակցության և բանտի վարչակազմի հետ փոխհարաբերությունների առումով: Հայկական գողական օրենքը «պահանջում է առաջին հերթին հարգել դիմացիներին, ոչ մեկին չվիրավորել, կռիվ չսարքել, պահպանել մաքրություն և կարգուկանոն, բայց, միաժամանակ, հարգանք ունենալ սեփական անձի նկատմամբ»²:

Գողական աշխարհի հասկացությունը վերջինիս էությանը հնարավորինս համապատասխանեցնելու և գողական աշխարհը հանցավոր այլ խմբավորումներից առավել հստակ սահմանազատելու օրենսդրական հիմք ստեղծելու նպատակով՝ կարծում ենք, որ գողական աշխարհի հասկացության մեջ անհրաժեշտ է կատարել փոփոխություն և հստակ մատնանշել, որ այն գործում է ոչ թե ուղղակի իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, այլ գործում է «գողական օրենքի» («պռագոնի») վրա հիմնված վարքագծի կանոնների համաձայն:

Խնդիրն այն է, որ ոչ միայն գողական աշխարհը, այլ նաև հանցավոր այլ խմբավորումներ կարող են ունենալ իրենց սահմանած և ճանաչած վարքագծի կանոնները, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին: Նման խմբավորումներից գողական աշխարհը հստակ սահմանազատելու և քննարկվող հանցակազմի շրջանակներն անհիմն չընդլայնելու նպատակով՝ կարծում ենք, որ գողական աշխարհի հասկացության մեջ պետք է հստակ նշվի, որ դրա վարքագծի կանոնները հիմնված են գողական օրենքի վրա:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ «գողական օրենք» և «պռագոն» եզրույթները նկարագրում են միևնույն երևույթը, օրենսդրական մակարդակում վե-

¹ Տե՛ս **Կ.Ա.Քիշադյան** Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), գիտ. խմբ.՝ **Ս.Վ.Առաքելյան**, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 23-25, (<https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5lEu.pdf> էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ):

² Տե՛ս **Ն.Իսկանդարյան և այլ համահեղինակներ**, նշված աշխ., էջ 8:

րոնշյալ երկու տերմինների միաժամանակյա կիրառումն անհրաժեշտ չէ, և օրենսդրական մակարդակում առավել հարիր է «գողական օրենք» եզրույթի կիրառումը:

Գողական աշխարհի հասկացության հաջորդ հատկանիշը գողական աշխարհի նպատակն է, այն է՝ հանցագործություն կատարելը կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը:

Գողական աշխարհի հասկացության շրջանակներում հանցագործություն կատարելը, հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը, անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը տեսության մեջ ևս մեկնաբանված են¹, ուստի դրանց կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Ինչ վերաբերում է հանցագործություն կատարելը, հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը եզրույթներին, ապա դրանց միաժամանակյա կիրառման անհրաժեշտությունը, կարծում ենք, բացակայում է:

Հարկ է նշել, որ հանցագործություն կատարել եզրույթը հավասարապես վերաբերելի է ինչպես կատարողին, այնպես էլ մյուս հանցակիցներին՝ դրոշին, կազմակերպչին և օժանդակողին: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ գործող Օրենսգրքում հանցագործություն կատարած անձ եզրույթն օգտագործելիս (67-րդ հոդվածի 5-րդ մաս) օրենսդիրը նկատի է ունեցել հանցակիցների բոլոր տեսակներին:

Մինչև ժամանակ պետք է նշել, որ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը, ըստ էության, հանցակցության դրսևորումներ են: Օրինակ՝ հանցագործության կատարումը հովանավորելը կարող է դրսևորվել հանցագործությունը կազմակերպելով, այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը՝ հանցագործությանը դրդելով կամ դա կազմակերպելով:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ հանցագործություն կատարել եզրույթի կիրառման պարագայում բացակայում է նաև հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը որպես նպատակ նախատեսելու անհրաժեշտությունը, քանի որ դրանք հանցագործություն կատարելու մասնավոր դրսևորումներ են:

Այս հատկանիշի առնչությամբ հարկ է անդրադառնալ նաև հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելու կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալու միջոցներին. որպես այդպիսին հանդես են գալիս բռնությունը, սպառնալիքը, հարկադրանքը կամ անօրինական այլ գործողությունները:

Նախ, գործող Օրենսգրքի համակարգային վերլուծության տեսանկյունից նպատակահարմար չէ սպառնալիք և հարկադրանք եզրույթների միաժամանակյա կիրառումը: Այսպես, գործող Օրենսգրքի մի շարք հանցակազմերի (176-րդ, 188-րդ, 197-րդ, 258-րդ, 260-րդ հոդվածներ) ուսումնասիրությունից բխում է, որ օրենսդիրը սպառնալիք և հարկադրանք եզրույթները միաժամանակ չի կիրառել, այլ ուղղակիորեն մատնանշել է սպառնալիքի որոշ տեսակներ և դրա հետ մեկտեղ հաջորդիվ կիրառել հարկադրանքի այլ եղանակ (ծև) եզրույթը:

Նման պայմաններում, նպատակ ունենալով ապահովել գործող Օրենսգրքի իրավակարգավորումների ներդաշնակությունը, առաջարկում ենք գողական աշ-

¹ Տե՛ս Կ.Ա.Բիշարյան, նշված աշխ., էջեր 30-31:

խարհի հասկացության մեջ սպառնալիքի, հարկադրանքի փոխարեն կիրառել բռնություն գործադրելու սպառնալիք, շանտաժ կամ հարկադրանքի այլ եղանակ ձևակերպումը:

Բացի այդ, որպես միջոց անհրաժեշտ է գողական աշխարհի հասկացության մեջ նշել նաև գողական աշխարհում ունեցած հեղինակության շնորհիվ վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը՝ հաշվի առնելով գողական աշխարհի ներկայացուցիչների կողմից իրենց «գործառնություններն» իրականացնելիս այդ մեթոդի հաճախակի կիրառումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասում տրված հասկացությունը խմբագրել և շարադրել հետևյալ կերպ.

«Սույն գլխի իմաստով՝ գողական աշխարհ է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է գողական օրենքի վրա հիմնված վարքագծի կանոնների համաձայն, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ գողական աշխարհում ունեցած հեղինակության կամ բռնության, բռնություն գործադրելու սպառնալիքի, շանտաժի, հարկադրանքի այլ եղանակի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը»:

Հարկ է նշել, որ գողական աշխարհի նման հասկացությունը համահունչ է արտասահմանյան երկրների փորձին՝ հաշվի առնելով, իհարկե, ներպետական օրենսդրության առանձնահատկությունները:

Այսպես, «Կազմակերպված հանցավորության և շորթման մասին» Վրաստանի օրենքի¹ 3-րդ հոդվածի համաձայն՝ ««գողական համագործակցությունը» անձանց ցանկացած ընդհանրություն է, որը պայմանավորվել է իրականացնել «գողական համագործակցության» գործունեությունը», իսկ ««գողական համագործակցության» գործունեությունը «գողական համագործակցության» անդամի, օրենքով գողի գործունեություն է, որն իրականացվում է ահաբեկման, սպառնալիքի, հարկադրանքի, լռություն պահպանելու պայմանով հարկադրանքի, «գողական սխողկայի», «գողական ռազբորկայի» միջոցով, հանցավոր արարքներին անչափահասների ներգրավման, հանցագործություն կատարելու, հանցագործություն կատարելուն դրդելու միջոցով, սեփական քրեական հեղինակությունը օգտագործելով կամ այլ ապօրինի արարքներով, որոնց նպատակն է իր կամ այլ անձանց համար օգուտ կամ այլ առավելություն ստանալը, իշխանություն և (կամ) ազդեցություն ձեռք բերելը, տալը»:

Իսկ Իտալիայի քրեական օրենսգրքի² 416-bis հոդվածի համաձայն՝ «միությունը մաֆիայի տեսակ է, եթե նրա անդամներն օգտագործում են միության կապերի ահաբեկող ուժը, ենթակայության պայմանները և դրանցից բխող «լռության օրենսգիրքը» հանցագործություններ կատարելու համար, ուղղակի կամ անուղղակի կերպով տնտեսական գործունեության նկատմամբ կառավարում կամ վերահսկում ստանալու, կոնցեսիաներ, թույլտվություններ, պայմանագրեր և պետական ծառայություններ ստանալու համար, իր կամ այլ անձանց համար անարդար օգուտներ կամ առավելություններ ստանալու համար, կամ այն բանի համար, որ խոչընդոտեն կամ խանգարեն ձայնի իրավունքի ազատ իրականացումը կամ ապահովեն ձայներ իրենց կամ այլ անձանց համար ընտրությունների ժամանակ»:

¹ Ст'у Закон Грузии об организованной преступности и рэкрете (<https://matsne.gov.ge/ru/document/view/27814?publication=1>) էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ):

² Ст'у Codice penale Italiano (<https://www.altalex.com/documents/codici-altalex/2014/10/30/codice-penale>) էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ):

3. ԳՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՍՏԵՂԾԵԼԸ՝ ՈՐՈՇՍ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕՔՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՆԱԽԱՏԵՍԵԼԸ

Հաջորդիվ, անդրադառնալով քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմին, հարկ է նշել, որ այն դրսևորվում է գողական աշխարհը ստեղծելով կամ ղեկավարելով:

Ըստ Կ.Բիշարյանի՝ «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կարող է դրսևորվել, նախ, քրեական մտածելակերպին հարող անձանց հանցավոր գաղափարների շուրջ համախմբելով, այնուհետև՝ նրանց միջև դերաբաշխում կատարելով: Օրինակ՝ օրենքով գողի» կողմից «պալաժենեց» նշանակելով, իսկ վերջինիս կողմից էլ՝ կոնկրետ տարածքի համար պատասխանատու «նայող» (քրեակատարողական հիմնարկների պարագայում՝ «զոն նայող», «կամեր նայող», «բարաբ նայող») նշանակելով: Ընդ որում, պարտադիր չէ, որ «նայողը» նշանակվի «պալաժենեցի» միջոցով: Նա կարող է նշանակվել նաև անմիջականորեն «օրենքով գողի» կողմից:

Այլ խոսքով՝ ստեղծելը պետք է դրսևորվի քրեակատարողական հիմնարկներում կամ դրանցից դուրս այդ խմբավորումներին բնորոշ հիերարխիկ կառուցվածքով և դերակատարությամբ միավորումներ ձևավորելով:

Հանցագործությունն ավարտված է համարվում քրեական աստիճանակարգությամբ և միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց քրեական ենթամշակույթ կրող խմբավորման նպատակների շուրջ համախմբելու պահից՝ անկախ խմբավորման անդամների կողմից կոնկրետ արարքներ կատարելու հանգամանքից»¹:

Քննարկվող հանցակազմի նման մեկնաբանությունը, կարծում ենք, խնդրահարույց է, քանի որ այն վերաբերում է գողական աշխարհի բաղկացուցիչ մասերի՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների ստեղծմանը: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, օրենսդիրն իրականում քննարկվող հանցակազմում նկատի է ունեցել ամբողջ գողական աշխարհը, այլ ոչ թե դրա բաղկացուցիչ մասերից՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորումները: Իրականում Կ.Բիշարյանի արտահայտած տեսակետները վերաբերում են ոչ թե քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներից ստեղծելուն, այլ՝ ղեկավարելուն, ինչին մեր կողմից առավել մանրամասն անդրադարձ կկատարվի հետագայում:

Վերադառնալով քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներից գողական աշխարհը ստեղծելու քննարկմանը և հաշվի առնելով, որ քննարկվող հանցակազմը ՀՀ քրեական օրենսդրությունում նախատեսվել է համեմատաբար ոչ վաղ անցյալում, պետք է փաստել, որ դրա վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները սակավաթիվ են: Հետևաբար, քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումներից ստեղծելու վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով՝ անհրաժեշտ է հիմնվել քննարկվող հանցակազմի հետ ընդհանուր բնութագրիչ գծեր ունեցող հանցավոր կազմակերպություն (հանցավոր համագործակցություն) ստեղծելու վերաբերյալ արտահայտված մոտեցումների² վրա՝ հաշվի առնելով, իհարկե, քննարկվող հանցակազմի առանձնահատկությունները:

¹ Տե՛ս Կ.Ա.Բիշարյան, նշված աշխ., էջեր 31-32:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, դասագիրք քուհերի համար, վեցերորդ հրատ.՝ փոփոխ. և լրաց., խմբ.՝ Գ.Ս.Ղազինյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 514, Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 10 июня 2010 г. N 12 "О судебной практике рассмотрения уголовных дел об организации преступного сообщества (преступной организации) или участии в нем (ней)", 7-րդ կետ, (https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_101362/ էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ), Ж.В.Виденькина Уголовная ответственность за

Վերը նշված մոտեցումների համադրված վերլուծության արդյունքում համգում ենք հետևության, որ որպես գողական աշխարհի ստեղծում պետք է դիտարկել այն արարքները, որոնք ուղղված են դրա ձևավորմանը: Այդպիսիք են գողական աշխարհի կազմակերպական կառուցվածքը, կարգապահությունը և դա խախտելու համար պատժի միջոցները որոշելը, գողական աշխարհի գործունեության ծրագրերը մշակելը, դրա նպատակները որոշելը, գողական աշխարհի անդամներին հավաքագրելը, նրանց միջև գործառնության պարտականությունները բաշխելը, առանձին խմբեր միավորելը, դրանց կազմակերպիչների ու ղեկավարների միավորում ստեղծելը, կապի գործուն ուղիներ հիմնելը իրավապահ և իշխանության այլ մարմինների ներկայացուցիչների հետ և այլն:

Գողական աշխարհը ստեղծելն ավարտված է համարվում գողական աշխարհի փաստացի ձևավորման պահից, երբ այն պատրաստ է իրականացնել արարքները, որոնք կատարելու նպատակով ստեղծվել է՝ անկախ այդպիսի կոնկրետ արարքներ փաստացի կատարելու հանգամանքից:

Ստացվում է, որ գողական աշխարհի ստեղծելը կարող է մեղսագրվել այն անձանց, ովքեր կատարել են արարքներ՝ ուղղված դրա ձևավորմանը: Այլ կերպ՝ օրենսդիրը քրեական պատասխանատվություն է նախատեսել «այնպիսի արարքի համար, որը տեղի է ունեցել ավելի քան մեկ դար առաջ»¹, որպիսի մոտեցումը, մեր կարծիքով, ընդունելի չէ:

Այս առնչությամբ մենք համակարծիք ենք իրավակիրառ պրակտիկայում արտահայտված այն տեսակետի հետ, որ «որևէ անձ երբևէ չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել «գողական աշխարհ» ստեղծելու համար»²:

Այսպիսով, բացակայում է օրենսդրի կողմից գողական աշխարհի ստեղծելը քրեականացնելու անհրաժեշտությունը, հետևաբար՝ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասը՝ գողական աշխարհը ստեղծելու մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասում տրված հասկացությունը խմբագրել և շարադրել հետևյալ կերպ.

«Սույն գլխի իմաստով՝ գողական աշխարհ է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է գողական օրենքի վրա հիմնված վարքագծի կանոնների համաձայն, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ գողական աշխարհում ունեցած հեղինակության կամ բռնության, բռնություն գործադրելու սպառնալիքի, շանտաժի, հարկադրանքի այլ եղանակի կամ անօրինական այլ գոր-

организацию преступного сообщества или участие в нем, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2012, էջ 101, (<https://www.twirpx.com/file/2106501/>) էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ), **Т.В.Якушева** Законодательная регламентация и практика привлечения к уголовной ответственности за организацию преступного сообщества (преступной организации), дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук, Москва, 2016, էջ 86, (<https://www.twirpx.com/file/1984128/>) էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ):

¹ Տե՛ս Սարգոս իրավունքների եվրոպական դատարանի *Ashlarba v. Georgia* գործով նշված վճռի 22-րդ կետը:

² Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշումը (https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622) էլեկտրոնային հասանելիությունը 12.10.2024 թվականի դրությամբ):

ծողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը»:

Բացի այդ, գտնում ենք, որ բացակայում է օրենսդրի կողմից գողական աշխարհի ստեղծելը քրեականացնելու անհրաժեշտությունը, հետևաբար՝ գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 1-ին մասը՝ գողական աշխարհը ստեղծելու մասով, անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:

НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ ПОНЯТИЯ ГРУППЫ С КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРОЙ (ВОРОВСКОГО МИРА) И КРИМИНАЛИЗАЦИИ СОЗДАНИЯ ВОРОВСКОГО МИРА

Арман Бабахянян

*Преподаватель кафедры уголовного права ЕГУ,
Помощник Судьи Уголовной палаты Кассационного суда РА,
arman.babakhanyan@ysu.am
ORCID - 0000-0001-9465-6016*

Абстракт: Полагаем, что законодатель, предусмотрев статью 323 УК РА, имел целью активизировать уголовно-правовую борьбу с представителями руководства воровского мира. Однако некоторые из принятых законодателем подходов проблематичны и не способствуют повышению эффективности уголовно-правовой борьбы с представителями руководства воровского мира.

В данном контексте цель работы - в результате систематического изучения и анализа понятия группы с криминальной субкультурой (воровского мира), и правового регулирования, предусматривающего уголовную ответственность за ее создание, уточнить понятия воровского мира, предложив его отредактированный вариант, а также определить необходимость установления уголовной ответственности за его создание.

В результате мы пришли к выводу, что воровским миром считается объединение лиц, наделенное криминальной иерархией и межличностными иерархическими отношениями, который действует по правилам поведения, основанным на воровском законе, и целью которого является совершение преступления или решение споров (проблем), связанных с общественными или частными делами либо получением незаконной выгоды или иного преимущества посредством влияния в воровском мире или посредством насилия, угроз насилия, шантажа, принуждения или других незаконных действий. Кроме того, мы пришли к выводу, что нет необходимости криминализировать создание воровского мира.

Ключевые слова: группа с криминальной субкультурой; воровской мир; воровской закон; представители руководства воровского мира; репутация в воровском мире; создания группы с криминальной субкультурой; создания воровского мира.

SOME KEY ISSUES OF THE CONCEPT OF A GROUP WITH A CRIMINAL SUBCULTURE (THIEVES' WORLD) AND THE CRIMINALISATION OF CREATION OF THE THIEVES' WORLD

Arman Babakhanyan

Lecturer at Chair of Criminal Law of YSU,

Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court,

arman.babakhanyan@ysu.am

ORCID - 0000-0001-9465-6016

Abstract: We believe that the legislator, by providing for Article 323 of the Criminal Code of the Republic of Armenia, intended to intensify the criminal-legal fight against representatives of the leadership of the thieves' world. However, some of the approaches adopted by the legislator are problematic and do not contribute to increasing the effectiveness of the criminal-legal fight against the representatives of the leadership of the thieves' world.

The theory of quantitative excess in criminal law is outlined in part 3 of Article 49, which states: "If the perpetrator of the criminal offense causes harm to an object that was agreed upon with the accomplices but inflicts greater damage than was intended, or commits the agreed offense with an aggravating circumstance not included in the other accomplices' intention, or harms the agreed object while committing a more serious offense that also fulfills the accomplices' objective, then the accomplices will be held criminally liable for their complicity in the crime involved in their intent."

Part 4 of Article 49 of the Criminal Code of the Republic of Armenia further clarifies: "If the perpetrator commits a less dangerous crime instead of the agreed offense, causing harm to the agreed object, the other accomplices will be held criminally liable for the attempted crime as per their intent. Conversely, if the perpetrator commits a less dangerous crime by damaging a different object than originally intended, the other accomplices will face criminal responsibility for the preparation of the crime included in their intention."

In the aforementioned paragraph, the legislator identifies two scenarios as instances of excess:

1) when the perpetrator commits a less dangerous crime instead of the agreed-upon offense, causing harm to the intended object, and

2) when the perpetrator commits a less dangerous crime, damaging a different object than originally planned.

It is important to note that both of these cases essentially align with the concept of "unsuccessful crime," indicating that we are dealing with failed offenses rather than true excess. The distinction between these two concepts is quite subtle, which is why the Code specifically addresses failed conspiracies in Article 47, Part 3 of the Criminal Code of the Republic of Armenia. This article states that if the perpetrator does not complete the crime due to circumstances beyond their control, the other accomplices are responsible for the preparation of the crime or attempted crime. Additionally, Part 4 of Article 47 specifies that if actions intended to organize, incite, or assist in the crime do not succeed due to factors outside the individual's control, they will be held accountable for the preparation of the crime as outlined in their intent or for the criminal attempt, provided that part of the objective aspect of the crime has been fulfilled.

¹ See RA Criminal law, General part, textbook for universities, YSU, Yerevan, page 289.

In this instance, the legislator assigns criminal liability in the first case for an attempted crime and in the second case for the preparation of a crime. We argue that the situations outlined in Part 4 of Article 49 of the Criminal Code of the Republic of Armenia should not be classified as excess or recognized as a new type of excess. Instead, they fall under the concept of failed complicity, which is already addressed by existing regulations in the Criminal Code concerning the criminal assessment of such acts. Therefore, we believe that Part 4 of Article 49 unnecessarily complicates the Criminal Code, as the provisions for criminal responsibility related to unsuccessful conspiracies are already adequate for assessing these cases.

The other type of excess recognized in criminal law theory is known as qualitative excess. In cases of qualitative excess, the perpetrator commits a crime that is fundamentally different in nature from the planned offense or engages in a different crime altogether. For example, if accomplices agree to inflict serious harm on a victim's health, but the perpetrator also commits rape or murder in addition to the intended theft, this represents qualitative excess. Here, a "different crime" refers to a crime with a distinct object.

However, it is important to note that while life and health are different objects of criminal protection, if the perpetrator takes the victim's life instead of merely harming their health, the issue of criminal liability is addressed not through qualitative but through quantitative rules of excess. In this scenario, the other accomplices are held responsible not for the preparation of health harm but for the crime involved in their intent, specifically for their complicity in the harm to the victim's health, since this is absorbed by the more serious crime committed.

Many scholars have conducted studies to clarify the rules of criminal liability for accomplices in cases of the perpetrator's excess, distinguishing between quantitative and qualitative excess. For instance, Telnov argued that in both types of excess, other accomplices (those who did not intend to commit the specific crime) cannot be held responsible.¹

Prominent scholar M.D. Shargorodsky asserted that "the excess of the perpetrator does not increase the responsibility of the accomplice. Whether the perpetrator refrains from committing the intended crime or commits a more serious one should not alter or negate the accomplice's liability. The perpetrator's guilt is defined by their actions, knowledge, and intentions, while their social dangerousness is determined by their conduct."²

L.D. Gauchman stated, "In cases where the perpetrator commits a completely different crime than that intended by the accomplices, the other accomplices will be held liable for the preparation of the intended crime."³

Article 36 of the Criminal Code of the Russian Federation stipulates that other accomplices are not held responsible for the perpetrator's excess.⁴ Similarly, Article 25 of the Criminal Code of Georgia states that accomplices are not liable for any transgressive acts committed during the excess of the crime.

¹ See Тельное П.Ф., Ответственность за соучастие в преступлении, М.: Юрид. лит., 1974, page 208.

² See Шаргородский М.Д., Некоторые вопросы общего учения о соучастии, Правоведение, № 1, 2010, page 84-97.

³ See Гаухман Л.Д. Соучастие в преступлении по российскому уголовному законодательству (опыт сравнительного правоведения), М.: Академия права и управления МВД, 2010, page 56:

⁴ See https://legislationline.org/sites/default/files/documents/a6/RF_CC_1996_am03.2012_en.pdf (access 01.12.2023).

Traditionally, criminal law adheres to the fundamental principle of accomplice liability, which states that other accomplices are not held responsible for the perpetrator's excess. The actions of each accomplice are assessed based on the severity of the crime committed by the perpetrator.

In national criminal law, only the individual who committed the excess can be held liable for those crimes. The question of the criminal responsibility of other accomplices is addressed as follows: in cases of qualitative excess, the qualification of the accomplices' actions depends on the circumstances surrounding the crime included in their intent. If the crime intended by the accomplices was not committed, they will be liable for the preparation of that planned crime. Conversely, if the intended crime was carried out, they will be held responsible for their complicity in that crime.

The accessory theory of criminal liability for accomplices is clearly reflected in the rules outlined above, as the accomplice's role is centered around the perpetrator, whose criminal activity determines the liability of the other accomplices. Article 49 of the Criminal Code distinguishes between cases of quantitative and qualitative excess, establishing specific rules for each.

Part 5 of Article 49 of the Criminal Code of the Republic of Armenia outlines the rules of criminal liability in cases of qualitative excess. Specifically, it states that if the perpetrator damages a different object than what was agreed upon, the other accomplices will be held liable for the preparation of the crime they intended. If the perpetrator's actions cause harm to another object instead of the agreed-upon target, the other accomplices will be liable for complicity in the crime they intended, provided that the perpetrator's act constitutes a more serious crime that encompasses the crime intended by the accomplices.

Essentially, the Criminal Code addresses all instances of excess as described in the aforementioned article, with the exception of qualitative excess where the perpetrator commits an additional crime beyond the planned offense. In such cases, the other accomplices are held criminally liable for their complicity in the crime included in their intent.

However, we contend that the omission of this specific case of qualitative excess in the Criminal Code of the Republic of Armenia is not justified. We propose that the Code should explicitly state that if the perpetrator commits an additional crime alongside the agreed-upon offense, then the other accomplices should be held responsible for their complicity in the crime included in their intent.

ՀԱՆՑԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՆՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ

Արթուր Դանիելյան

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ գլխավոր դատախազության վարչության դատախազ
artur.danielyan.1996@gmail.com
ORCID - 0000-0001-9385-7983*

Համառոտագիր: Քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացված է սահմանազանցման երկու տեսակ՝ քանակական և որակական: Որակական սահմանազանցման դեպքում կատարողը իրականացնում է պայմանավորված հանցագործությունից իր բնույթով բոլորովին տարբեր հանցանք կամ կատարում է պայմանավորվածից բացի այլ հանցանք և: ՀՀ քրեական օրենսգրքով տարբերակվել են քանակական և որակական սահմանազանցման դեպքերը՝ յուրաքանչյուրով սահմանելով քրեական պատասխանատվության կանոններ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ քրեական օրենսգրքով հստակ պետք է ամրագրել, որ եթե հանցանք կատարողը, պայմանավորվածից բացի, կատարում է նաև այլ հանցանք, ապա մյուս հանցակիցները ենթակա են պատասխանատվության իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությանը հանցակցելու համար:

Կարծում ենք, որ այն դեպքում, երբ կատարողը պայմանավորվածի փոխարեն ավելի ցածր վտանգավորություն ունեցող հանցանք է կատարում՝ վնաս պատճառելով պայմանավորված օբյեկտին, կամ երբ կատարողը պայմանավորվածի փոխարեն ավելի ցածր վտանգավորություն ունեցող հանցանք է կատարում՝ պայմանավորված օբյեկտի փոխարեն այլ օբյեկտի վնաս պատճառելով, ապա այդ դեպքերը չեն ներառվում հանցակցի սահմանազանցման մեջ և չեն համարվում հանցակցի սահմանազանցման նոր տեսակներ, այլ ներառվում են «չհաջողված հանցակցության» ինստիտուտի մեջ, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը նշված արարքներին քրեաիրավական գնահատական տալու մասով արդեն իսկ ունի համապատասխան կարգավորումներ:

Ուստի կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի 4-րդ մասը ավելորդ ծանրաբեռնում է ՀՀ քրեական օրենսգիրքը, քանի որ բովանակային առումով չհաջողված հանցակցության համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմերն արդեն իսկ բավարար են նման դեպքերին քրեաիրավական գնահատական տալու համար:

Բանալի բառեր – *սահմանազանցում; քանակական; որակական; հանցակից; քրեական պատասխանատվություն; դիտավորություն; ծանր հանցանք; չհաջողված հանցակցություն:*

ВОПРОСЫ КАЧЕСТВЕННОГО ЭКСЦЕССА СОУЧАСТНИКОВ ПО УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Артур Даниелян

*Соискатель кафедры уголовного права ЕГУ,
Прокурор Департамента Генеральной прокуратуры,
artur.danielyan.1996@gmail.com
ORCID - 0000-0001-9385-7983*

Абстракт. В теории уголовного права различают два типа нарушения границ: количественное и качественное. В случае качественного нарушения границы исполнитель совершает преступление, совершенно отличное по своей природе от оговоренного, или преступление, отличное от условного. Уголовный кодекс РА разделяет случаи количественного и качественного превышения и устанавливает для каждого из них правила уголовной ответственности.

Однако мы считаем, что в Уголовном кодексе должно быть четко указано, что если лицо, совершившее преступление, выполняет другое преступление помимо оговоренного, то другие соучастники подлежат ответственности за соучастие в преступлении, предусмотренном их намерением.

Также мы полагаем, что в случаях, когда исполнитель совершает преступление с меньшей опасностью, причиняя ущерб обусловленному объекту, или когда он причиняет ущерб другому объекту вместо запланированного, такие ситуации не должны рассматриваться как превышение и не являются новыми видами правонарушения соучастника. Они должны относиться к институту неудавшегося соучастия, который уже имеет соответствующие нормы в Уголовном кодексе РА для оценки подобных действий.

Таким образом, мы считаем, что часть 4 статьи 49 Уголовного кодекса РА излишне нагружает Кодекс, поскольку действующих норм, регулирующих уголовную ответственность за несостоявшееся соучастие, достаточно для адекватной оценки таких случаев.

Ключевые слова - *превышение границ; количественное; качественное; соучастие; уголовная ответственность; намерение; тяжкое преступление; неудавшееся соучастие.*

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նարեկ Հարությունյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության
Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական
առաջին բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական
narek.har.v@gmail.com
ORCID - 0009-0002-6126-6673

Համառոտագիր: Հոդվածում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետության քրեական գործող (նոր) օրենսգրքի հոդված 470-ով նախատեսված հանցագործության, այսինքն՝ անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ կողմը բնութագրող առանձնահատկությունները:

Այդ կապակցությամբ հոդվածում քննարկվում են արդիական մի շարք հարցեր, որոնք կապված են Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, Հայաստանի Հանրապետությունում բնակվելու, Հայաստանի Հանրապետության տարածքով տեղաշարժվելու (տարանցման), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից ելք գործելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգի առանձնահատկությունների հետ: Տվյալ համատեքստում, մասնավորապես, հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել ՀՀ օրենսդրության առավել հավանական և հաճախ հանդիպող այն խախտումները, որոնց վերաբերյալ հստակ պատկերացում ձևավորելը կարող է էական նշանակություն ունենալ հանցավոր վարքագծի քննարկվող դրսևորման քրեաիրավական պատշաճ որակման համար:

Իրականացված հետազոտության արդյունքում սույն հոդվածի հեղինակը հիմնավորել է, որ քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է միգրացիայի ապօրինի համապատասխան դրսևորումները կազմակերպելու մեջ: Ընդ որում, կազմակերպողն այդ գործընթացի անմիջական մասնակից չի հանդիսանում: ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտը նպաստում է դրան, ապահովում այն, պայմաններ ստեղծում դրա համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Բանալի բառեր - քրեական օրենսգիրք; հանցագործության օբյեկտիվ հատկանիշներ; հանցագործության օբյեկտիվ կողմ; հանցագործությունների որակում; միգրացիա; անօրինական միգրացիա; անօրինական միգրացիայի կազմակերպում:

Հոդվածը նվիրված է անօրինական միգրացիայի կազմակերպման հիմնախնդիրներին: Հաշվի առնելով անօրինական միգրացիայի ծավալները՝ այսօր խիստ արդիական է կանխարգելման ուղղությամբ տարվող հետազոտությունները: Հոդվածում իրականացվել է հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների մանրամասն վերլուծություն, անդրադարձ է կատարվել հանցանքի կատարման եղանակներին, դրանց դրսևորման առանձնահատկություններին:

Հողվածի շրջանակներում քննարկվում է անօրինական միգրացիա կազմակերպողին՝ որպես հանցանքը կատարող դիտարկման հարցը:

Անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ կողմի հատկանիշները նկարագրված են ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 470-ում, որի 1-ին մասի դրույթներին համապատասխան՝ այն բնութագրվում է՝

– **օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի** մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) **կազմակերպելով**, որը կատարվել է մուտքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ

– **օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի** Հայաստանի Հանրապետություն մուտքի, Հայաստանի Հանրապետությունում գտնվելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար **կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով**:

Նույն հոդվածի 2-րդ մասի դրույթներին համապատասխան՝ անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ կողմը բնութագրվում է **անձի** (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)

– Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը **կազմակերպելով**, որը կատարվել է ելքի, մուտքի կամ գտնվելու համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ

– Հայաստանի Հանրապետությունից ելքի, օտարերկրյա պետություն մուտքի կամ օտարերկրյա պետությունում գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար **կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով**:

Ընդ որում, քննարկվող հոդվածի նշված երկու մասերի պարագայում էլ նախատեսված է նույնական սանկցիա՝ «պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով»: Այդ առումով հարկ է նշել, որ օրենքը, մեր կարծիքով, անիմաստ գերծանրաբեռնվել է:

Բանն այն է, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 1-ին և 2-րդ մասերով, ըստ էության, նախատեսված են հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող գրեթե նույն արարքները: Տարբերությունն այն է, որ մի դեպքում խոսքը **օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը** Հայաստանի Հանրապետություն, **Հայաստանի Հանրապետությունում** նրա գտնվելը կամ **Հայաստանի Հանրապետության տարածքով** տարանցումը (տեղափոխումը) **կազմակերպելու** մասին է, իսկ մյուսում՝ **անձի** (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից **ելքը**, **օտարերկրյա պետություն** մուտքը կամ **օտարերկրյա պետությունում** գտնվելը **կազմակերպելու**: Ի դեպ, նշված երկու դեպքերում էլ արարքը բնութագրվում է **շահադիտական նպատակով** և մուտքի (ելքի), գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ **սահմանված կարգը խախտելով**, կամ մուտքի (ելքի), գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար **կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով**:

Միևնույն ժամանակ, քր. օր.-ի հոդված 470-ի նշված երկու մասերի առանձնացումը միանշանակ իմաստավորված կլիներ, եթե վերը նկարագրված արարքներից որևէ մեկի համար առավել խիստ պատասխանատվություն նախատեսվեր: Օրինակ՝ եթե հիմնավորվեր, որ անձի (անկախ քաղաքացիությունից կամ այն ունենալուց)՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը կազմակերպելն առավել վտանգավոր հանցագործություն է, քան օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունե-

ցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կազմակերպելը, և դրա համար առավել խիստ պատասխանատվություն սահմանվել: Մեր կարծիքով, սակայն, նման անհրաժեշտությունը բացակայում է:

Հետևաբար, օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից ՀՀ քրեական օրենսգրքի բննարկվող հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքներն առավել նպատակահարմար է միավորել մեկ մասում, հետևյալ բովանդակությամբ՝ «1. Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կամ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով՝ (...):»:

Այսպիսով, ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրվում է ակտիվ վարքագծով՝ ապօրինի **գործողություններով**, որոնք ուղղված են օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կամ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն նրա մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը կազմակերպելուն: Այն, ինչպես արդեն նշվել է, կարող է կատարվել մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, կամ մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Վերը նշված ապօրինի գործողությունների էությունը բացահայտելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ երկիր մուտքի, երկրից ելքի, երկրում գտնվելու կամ երկրի տարածքով տարանցման համար օրենսդրությամբ սահմանված կարգի առանձնահատկությունների բննարկմանը:

Մասնավորապես, օտարերկրացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու, Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու և բնակվելու, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու, Հայաստանի Հանրապետությունից ելքի, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ 2006 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքով: Վերջինիս հոդված 2-ի համաձայն՝ «**օտարերկրացիներ**» հասկացության մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող ինչպես այն անձինք, որոնք ունեն այլ պետության քաղաքացիություն (օտարերկրյա քաղաքացիներ), այնպես էլ՝ որոնք չունեն որևէ պետության քաղաքացիություն (քաղաքացիություն չունեցող անձինք): Նույն օրենքի հոդված 6-ի համաձայն՝

«1. Օտարերկրացիները մուտք են գործում Հայաստանի Հանրապետություն պետական սահմանի անցման կետերով՝ վավերական անձնագրի առկայության, մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի հիման վրա և սահմանային հսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի թույլտվության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

2. Մինչև 18 տարեկան օտարերկրացիները կարող են մուտք գործել Հայաստանի Հանրապետություն իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի կամ ուղեկցողի հետ միասին կամ միայնակ, եթե նրանք գալիս են Հայաստանի Հանրապետություն իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի մոտ կամ ընդունող կազմակերպություն:

3. Առանց անձնագրի, դրան փոխարինող փաստաթղթի կամ անվավեր անձնագրով Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետ ժամանած կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիների մուտքը չի թույլատրվում Հայաստանի Հանրապետության տարածք, և հնարավորության դեպքում նրանք անմիջապես վերադարձվում են իրենց ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից ժամանել են, նույն փոխադրողի տրանսպորտային միջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք Հայաստան են ժամանել ապաստանի իրավունք հայցելու նպատակով:

4. Սույն հոդվածի երրորդ մասում նշված օտարերկրացիների սեփական միջոցների բացակայության դեպքում նրանց վերադարձի ծախսերը միջազգային պայմանագրերով սահմանված կարգով կատարում են փոխադրողները, որոնք իրականացրել են այդ օտարերկրացիների փոխադրումը Հայաստանի Հանրապետություն, կամ Հայաստանի Հանրապետությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց՝ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի տրամադրման, Հայաստանի Հանրապետությունից ելքի, Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկման, ինչպես նաև այն պետությունների քաղաքացիների, որոնց համար սահմանված է Հայաստանի Հանրապետություն ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, անձնագրերում հատուկ նշում կատարելու հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառնություններն իրականացնում են ազգային անվտանգության մարմինները:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված գործառնություններն ազգային անվտանգության մարմինն իրականացնում է սույն օրենքին, «Պետական սահմանի մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործառնության իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ»:

Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացիների ելքի հետ կապված իրավակարգավորումները նախատեսված են նույն օրենքի հոդված 12-ով, որի համաձայն՝

«1. Օտարերկրացիները Հայաստանի Հանրապետությունից կարող են դուրս գալ վավերական անձնագրի և մինչև դուրս գալու պահը Հայաստանի Հանրապետության տարածքում նրանց օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ օրենքով կամ միջազգային պայմանագրերով:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով վարչական պատասխանատվության ենթարկված օտարերկրացին առանց վավերական անձնագրի և մինչև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու պահը Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից տուգանքի վճարման մասին անդորրագիրը (տուգանքի վճարումը հավաստող այլ փաստաթուղթը) սահմանային հսկողության մարմնին ներկայացնելու դեպքում:

3. Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով՝

ա) նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետությունում մինչև պատիժը կրելու ժամկետի ավարտը կամ պատիժը կրելուց օրենքով սահմանված կարգով ազատվելը.

բ) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, և որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարույթն իրականացնող մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց մասին տվյալները անհապաղ փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Այն դեպքում, երբ վերանում են հանգամանքները, որոնց ուժով արգելվել է օտարերկրացու ելքը Հայաստանի Հանրապետությունից, իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին»:

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների գտնվելու ժամկետի վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ով, որի համաձայն՝ այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է Հայաստանի Հանրապետություն ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր ժամկետով՝ մեկ տարվա ընթացքում, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ սահմանված չէ: Նշված օտարերկրացիների անձնագրում հատուկ նշում է կատարվում նրանց՝ Հայաստանի Հանրապետություն ժամանման անսաթվի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկելու կարգն ու պայմանները սահմանված են նշված օրենքի հոդված 13-ով, որում նախատեսված կարգավորումներին համապատասխան՝

«1. Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկություն է համարվում որևէ պետությունից Հայաստանի Հանրապետության տարածքով օդային կամ ցամաքային տրանսպորտի միջոցներով դեպի երրորդ պետություն օտարերկրացիների երթևեկությունը:

2. Տարանցիկ երթևեկության դեպքում օտարերկրացիները ներկայացնում են դեպի երրորդ երկիր ուղետոմսեր կամ երրորդ երկրի մուտքի վիզա և կարող են մնալ Հայաստանի Հանրապետության տարածքում 72 ժամից ոչ ավել, բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքերի: Հայաստանի Հանրապետության ցամաքային սահմանով երրորդ երկիր տարանցիկ երթևեկող օտարերկրացիները կարող են տարանցիկ վիզա ստանալ նաև առանց դեպի երրորդ երկիր ուղետոմսեր կամ երրորդ երկրի մուտքի վիզա ներկայացնելու:

3. Եթե օտարերկրացին գտնվում է տարանցիկ գոտում և չի մտնելու Հայաստանի Հանրապետության տարածք, ապա նա կարող է գտնվել տարանցիկ գոտում 48 ժամից ոչ ավել, բացառությամբ արտակարգ իրավիճակների դեպքերի»:

Հարկ է նշել նաև, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ 2001 թվականի նոյեմբերի 20-ի օրենքի հոդված 10-ի համաձայն՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և այլ հաղորդակցությունը պետական սահմանով իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անցման կետերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու Հայաստանի Հանրապետության մի-

ջազգային պայմանագրերին համապատասխան: Պետական սահմանի անցման կետերում ստեղծվում են սահմանապահ զորքերի հսկիչ-անցագրային կետեր:

Նույն օրենքի հոդված 11-ի համաձայն՝ պետական սահմանով՝ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անցման կետերով իրականացնում են սահմանապահ զորքերի զինծառայողները՝ անձանց Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու կամ Հայաստանի Հանրապետությունից մեկնելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում: Անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնումը պետական սահմանով իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերին և իրավական ակտերին համապատասխան: ՀՀ կառավարությունը կարող է սահմանել անձանց և տրանսպորտային միջոցների՝ պետական սահմանով բացթողնման պարզեցված կարգ:

Միևնույն ժամանակ, «ՀՀ պետական սահմանի անցման կետերում պետական լիազորված մարմինների գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 24.03.1998 թ.-ի թիվ 200 որոշման (կետեր 2, 5, 7, 10) համաձայն՝

1. ՀՀ քաղաքացին սահմանային վերահսկողությանը ներկայացնում է՝

– ՀՀ քաղաքացու անձնագիրը, ՀՀ քաղաքացու կենսաչափական անձնագիրը, ՀՀ դիվանագիտական անձնագիրը կամ ՀՀ վերադարձի վկայականը:

– ՀՀ երկքաղաքացին ներկայացնում է ՀՀ քաղաքացու անձնագիրը կամ այլ պետության անձնագիրը, որի քաղաքացին է հանդիսանում:

2. Օտարերկրացին ներկայացնում է՝

– քաղաքացիության երկրի անձնագիրը կամ դրան փոխարինող փաստաթուղթը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ՀՀ տարածքում նրա օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթուղթը:

3. Ծառայողական, դիվանագիտական և պաշտոնական անձնագիր կրող օտարերկրյա քաղաքացին ներկայացնում է՝

– քաղաքացիության երկրի ծառայողական, դիվանագիտական կամ պաշտոնական անձնագիրը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական մարմինների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրված համապատասխան տեսակի ՀՀ մուտքի վիզան: Վերը նշված կատեգորիայի անձինք կարող են մուտք գործել ՀՀ տարածք նաև ՀՀ ԱԳՆ-ից ստացված նամակի հիման վրա:

4. Օտարերկրյա անչափահաս քաղաքացին ներկայացնում է՝

– քաղաքացիության երկրի անձնագիրը կամ դրան փոխարինող փաստաթուղթը և մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն ծնողների, ծնողներից մեկի, օրինական ներկայացուցչի կամ ուղեկցողի հետ միասին կամ միայնակ, եթե նա գալիս է ծնողների, ծնողներից մեկի, օրինական ներկայացուցչի մոտ կամ ընդունող կազմակերպություն:

5. Քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա պետության կողմից փախստականի կարգավիճակ ստացած անձը ներկայացնում է՝

– ճանփորդական փաստաթուղթը, ինչպես նաև ՀՀ տարածքում իր օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթուղթը:

6. Հայաստանի Հանրապետության կողմից փախստականի կարգավիճակ ստացած անձը ներկայացնում է՝

– ՀՀ կառավարության կողմից տրված ճանփորդական փաստաթուղթ:

Այսպիսով, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կամ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պե-

տություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը ապօրինի կհամարվի, եթե խախտվեն վերը ներկայացված իրավակարգավորումներով սահմանված կարգը կամ պայմանները: Օրինակ, եթե օտարերկրացին մուտք գործի Հայաստանի Հանրապետություն՝ շրջանցելով պետական սահմանի անցման կետերը կամ անվավեր անձնագրով կամ առանց մուտքի վիզայի կամ կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի և այլն: Հետևաբար, նման դեպքերում օտարերկրացու մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը), ինչպես նաև անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը կազմակերպելը, համապատասխան այլ հատկանիշների առկայության պարագայում պատասխանատվություն կառաջացնի ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է, քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է միգրացիայի վերը նշված ապօրինի դրսևորումները **կազմակերպելու** մեջ: Ընդ որում, կազմակերպողն այդ գործընթացի անմիջական մասնակից չի հանդիսանում: Այսինքն, Հայաստանի Հանրապետություն մուտք են գործում, Հայաստանի Հանրապետությունում գտնվում կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տեղափոխվում են կամ՝ Հայաստանի Հանրապետությունից ելք կամ օտարերկրյա պետություն մուտք են գործում կամ օտարերկրյա պետությունում գտնվում են այլ անձինք: ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտը նպաստում է դրան, ապահովում այն, պայմաններ ստեղծում դրա համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով:

Այսպիսով, անօրինական միգրացիայի կազմակերպման գործընթացի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրա բովանդակությունը կազմող գործողությունների երկու ենթահամակարգ՝ 1) բուն անօրինական միգրացիան և 2) այն կազմակերպելը: Ընդ որում, այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք մեկ ընդհանուր համակարգի (անօրինական միգրացիայի կազմակերպման) համակցված և սերտորեն փոխկապակցված բաղկացուցիչ մասեր են¹:

Կազմակերպել ասելով՝ ընդհանուր առմամբ պետք է հասկանալ որևէ նպատակի համար կամ գաղափարի շուրջ համախմբելը, միավորելը, կազմավորելը, որևէ բան ստեղծելը, հիմնելը, հիմնադրելը, ձևավորելը, նախաձեռնելը, նախապատրաստելը, ձեռնարկելը, կարգավորելը, կանոնակարգելը, ղեկավարելը, ավարտված վիճակի հասցնելը²: Հետևաբար, ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցակազմի իմաստով, անօրինական միգրացիա կազմակերպելը հարկ է հասկանալ ավելի լայն իմաստով, քան հանցագործություն կազմակերպելն է:

Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի հոդված 46-ի 5-րդ մասի համաձայն՝ «Կազմակերպիչ է համարվում այն անձը, որը կազմակերպել կամ ղեկավարել է հանցանքի կատարումը: Կազմակերպիչ է համարվում նաև այն անձը, որը դրդել է մեկ ուրիշին կազմակերպելու կամ ղեկավարելու հանցանքի կատարումը: Կազմակերպիչ է համարվում նաև այն անձը, որը հանցանքը կազմակերպել կամ ղեկավարել է այնպիսի անձի միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ գործել է անզգուշությամբ»: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ անօրինական միգրացիան ինքնին հանցագործություն չէ, բացառությամբ այն դեպքերի,

¹ Տե՛ս *Фоменко, Д.Д.* К вопросу об объекте и объективной стороне организации незаконной миграции // Гуманитарные, социально-экономические и общественные науки. 2022. № 10, էջ 140:

² Տե՛ս նաև՝ Արդի հայերենի բացատրական բառարան / *Էդուարդ Բազրատի Սիլայան*: Երևան, «Հայաստան» հրատ., 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Երևան, «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն», 1969: Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան / *Աշոտ Մուրադի Մուքիսայան*: Երևան, «Երևանի պետական համալսարան», 2009:

երբ առկա են պետական սահմանն ապօրինի հատելու հանցակազմի հատկանիշները (ՀՀ քր. օր.-ի հոդված 469)¹: Ուստի, քննարկվող հանցագործության իմաստով հարկ է խոսել ոչ թե հանցագործության կազմակերպչի՝ որպես հանցակցի, այլ անօրինական միգրացիա կազմակերպողի՝ որպես հանցանքը կատարողի մասին:

Ըստ այդմ, **անօրինական միգրացիայի կազմակերպում** ասելով՝ հարկ է հասկանալ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի Հայաստանի Հանրապետություն մուտքին, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելուն կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցմանը (տեղափոխմանը), ինչպես նաև անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքին, օտարերկրյա պետություն մուտքին կամ օտարերկրյա պետությունում գտնվելուն ուղղված գործողություններով **ցանկացած եղանակով նպաստելը, դա ապահովելը, դրա համար պայմաններ ստեղծելը**: Այն կարող է իրականացվել, մասնավորապես, օրենսդրությամբ սահմանված կարգը շրջանցելով՝ Հայաստանի Հանրապետություն կամ օտարերկրյա պետություն մուտք կամ Հայաստանի Հանրապետությունից ելք գործելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տեղափոխելու եղանակներ մշակելով և դրանք կենսագործելով, Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետություն տարածքում ապօրինի գտնվելու պայմաններ ստեղծելով (օրինակ՝ բնակարան վարձելով, կացարան տրամադրելով չգրանցված աշխատատեղով ապահովելով), կեղծ փաստաթղթեր պատվիրելով և դրանք անօրինական միգրանտին և նրա ընտանիքի անդամներին տրամադրելով, ուսումնական կամ աշխատանքային միգրացիային նպաստելու վերաբերյալ կեղծ տեղեկություններ հրապարակելով և «հաճախորդների» (հավանական միգրանտների) խմբեր ձևավորելով, սահմանապահ ծառայություն իրականացնողների և մաքսավորների հետ հանցավոր համաձայնություն կայացնելով և այլն:

Միևնույն ժամանակ, օտարերկրացիների կողմից Հայաստանի Հանրապետությունում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ երթևեկության կարգը խախտելը պատասխանատվություն են առաջացնում Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ՀՀ ՎԻՎՕ-ի) հոդված 201-ի 1-ին մասով: Իսկ ՀՀ ՎԻՎՕ-ի հոդված 200-ի դրույթներին համապատասխան՝ վարչական պատասխանատվության է ենթակա սահմանային շերտ մուտք գործելու կամ այնտեղ գտնվելու, ինչպես նաև բնակվելու կանոնները խախտելը:

Այսպիսով, անօրինական միգրացիայի կազմակերպումը կարելի է բնութագրել նաև որպես գործընթաց, որն արտահայտվում է համապատասխան անձի կամ անձանց խմբի որոշակի գործողությունների և ինտելեկտուալ գործունեության մեջ՝ ուղղված օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի մուտքը Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետությունում նրա գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) կամ անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը պլանավորելուն, ապահովելուն և իրականացնելուն²:

Միևնույն ժամանակ, ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի դրույթներին համապատասխան, անօրինական միգրացիայի կազմակերպումն օբյեկտիվ կողմից, ինչպես արդեն նշվել է, բնութագրվում է ոչ միայն մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման

¹ Անօրինական միգրացիայի կազմակերպման և պետական սահմանն ապօրինի հատելու հանցակազմերի սահմանազատման հիմնախնդիրներին անդրադարձ է կատարված մեր այլ աշխատանքում:

² Տե՛ս՝ **Փոմենկո, Д.Д.** К вопросу об объекте и объективной стороне организации незаконной миграции, էջ 141:

համար օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով, այլև մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

Կեղծ փաստաթղթի էությունը բացահայտելու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ փաստաթղթի հասկացությանը: Մասնավորապես, լայն իմաստով այն հասկացվում է որպես՝ որևէ բանի հաստատումը, վավերացումը, ապացույցը հանդիսացող կամ որևէ իրավունք արտոնող պաշտոնական գրություն, թուղթ¹:

Քրեաիրավական իմաստով տվյալ հասկացության առավել նեղ սահմանում է պարունակում ՀՀ քրեական օրենսգիրքը, որի հոդված 3-ի 1-ին մասի 27-րդ կետի համաձայն՝ **փաստաթուղթը** իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող **նյութական կամ էլեկտրոնային** կրիչն է:

Մասնագիտական գրականության մեջ փաստաթղթերը, ըստ դրանք կազմող և տրամադրող սուբյեկտների, ընդունված է բաժանել երկու տեսակի՝ 1) պաշտոնական (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց կազմակերպությունների կամ պաշտոնատար անձանց կողմից տրվող) և 2) մասնավոր (ոչ պաշտոնական)²: Մինչդեռ ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի բովանդակությունից հետևում է, որ անօրինական միգրացիայի կազմակերպման պարագայում այդ առումով հարկ է հասկանալ ցանկացած փաստաթուղթ՝ անկախ այն կազմողից, հաստատողից կամ տրամադրողից: Այսինքն, անօրինական միգրացիա կազմակերպելու քննարկվող եղանակն առկա կլինի ինչպես, օրինակ, կեղծ անձնագիր կամ մուտքի արտոնագիր, այնպես էլ մասնավոր կազմակերպությունում աշխատելու, դրա հետ կապված աշխատավարձի չափի վերաբերյալ կեղծ տեղեկանք կամ ֆիզիկական անձից բնակտարածքի վարձակալության կեղծ պայմանագիր ներկայացնելով և այլն:

Ինչ վերաբերում է ներկայացվող փաստաթղթի **կեղծ** լինելուն, ապա, որպես այդպիսին, պետք է հասկանալ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող նյութական կամ էլեկտրոնային այն կրիչները, որոնցում առկա տեղեկատվությունը խեղաթյուրված է, չի համապատասխանում իրականությանը: Ընդ որում, նման դեպքերում հանցավորի արարքը պարունակում է նաև ՀՀ քր. օր.-ի հոդված 457-ով նախատեսված հանցագործության (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր կեղծելու կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելու, պատրաստելու կամ օգտագործելու) հատկանիշներ:

Հարկ է նշել, սակայն, որ հանցագործությունների համակցությունը տվյալ պարագայում բացակայում է: Բանն այն է, որ կեղծ փաստաթուղթ պատրաստելը, իրացնելը կամ օգտագործելը տվյալ դեպքում կեղծ փաստաթուղթ ներկայացնելով անօրինական միգրացիա կազմակերպելու եղանակներ են (դրա բաղկացուցիչ մաս): Այդ առումով ՀՀ քր. օր.-ի հոդված 52-ի 6-րդ մասը սահմանում է. «Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»: Մինչդեռ հոդվածներ 457-ով և 470-ով նախատեսված

¹ Տե՛ս՝ Արդի հայերենի բացատրական բառարան / *Էրուարդ Բագրատի Սղայան*: Երևան, «Հայաստան» Հրատարակչություն, 1976: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1969: Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան / *Աշոտ Սուրադի Սուքիասյան*: Երևան, «Երևանի Պետական Համալսարան», 2009:

² Տե՛ս, օրինակ՝ Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջեր 92-93:

սանկցիաների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ անօրինական միգրացիա կազմակերպելն ավելի խիստ է պատժվում, քան փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը: Ինչ վերաբերում է մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար **կեղծ տեղեկություն** ներկայացնելուն, ապա, անօրինական միգրացիա կազմակերպելու հանցակազմի իմաստով, այդ առումով պետք է հասկանալ խեղաթյուրված, իրականությանը չհամապատասխանող ցանկացած այլ տեղեկություն, որը փաստաթուղթ կամ դրա բաղկացուցիչ մաս չէ: Օրինակ՝ իբր քաղաքական հայացքներով կամ սեռական կողմնորոշմամբ պայմանավորված՝ տվյալ անձ նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում ձնշումների կամ հետապնդումների, իշխանությունների կողմից բռնաձնշումներ գործադրելու և նման այլ մտացածին հանգամանքների վերաբերյալ:

Այսպես, ՀՀ ԱԱԾ վարույթում եղած գործերից մեկով առկա փաստական տվյալներով հաստատվել է, որ բացահայտված հանցավոր խմբի անդամները մի շարք անձանց տրամադրել են նախապես մշակված տեքստեր այն մասին, թե իբր ՀՀ-ում 2018 թվականից հետո գործող իշխանությունների կողմից քաղաքական ձնշումներ են սկսվել Հայաստանի հանրապետական կուսակցության անդամների և նրանց աջակիցների նկատմամբ, որի արդյունքում չեն դիմացել հալածանքներին, հետապնդումներին և հարկադրված լքել են հայրենիքը, ինչի կապակցությամբ հրահանգավորումներ են կատարել և հորդորել քաղաքացիներին նույնությամբ չկրկնել տեքստի բովանդակությունը: Ավելին, խմբի անդամները նախապես մշակված տեքստերում հատուկ շեշտադրումներ են կատարել այն մասին, որ քաղաքական հայացքներով պայմանավորված՝ հիշյալ անձանց կյանքին ու ազատությանը վտանգ է սպառնում, նրանք կորցրել են իրենց բիզնեսը և այլ մտացածին կեղծ տեղեկություններ՝ հայցելով օտարերկրյա կառավարությանը՝ քաղաքական ապաստան տրամադրել իրենց¹:

ԵՆԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով անօրինական միգրացիայի կազմակերպման օբյեկտիվ հատկանիշները՝ հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

– ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված են հանցագործության օբյեկտիվ կողմը բնութագրող գրեթե նույնական արարքներ: Ընդ որում, բացարձակ չեն տարբերվում այդ արարքների կատարման համար նախատեսված սանկցիաները: Հետևաբար, օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից, ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքներն առավել նպատակահարմար է միավորել մեկ մասում:

– Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմն արտահայտվում է միգրացիայի ապօրինի համապատասխան դրսևորումները կազմակերպելու մեջ: Ընդ որում, կազմակերպողն այդ գործընթացի անմիջական մասնակից չի հանդիսանում: ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցագործության սուբյեկտը նպաստում է դրան, ապահովում այն, պայմաններ ստեղծում դրա համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ կեղծ փաստաթուղթ կամ կեղծ տեղեկություն ներկայացնելով:

– Անօրինական միգրացիայի կազմակերպումը հարկ է հասկանալ ավելի լայն իմաստով, քան հանցագործություն կազմակերպելն է: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ անօրինական միգրացիան ինքնին հանցագործություն չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են պետական սահմանն ապօրինի հատելու հանցակազմի հատկանիշները: Ուստի, քննարկվող հանցագործության իմաստով,

¹ Տե՛ս <https://www.aravot.am/2022/07/19/1280917/>:

հարկ է խոսել ոչ թե հանցագործության կազմակերպչի՝ որպես հանցակցի, այլ անօրինական միգրացիա կազմակերպողի՝ որպես հանցանքը կատարողի մասին:

– ՀՀ քր. օր.-ի հոդված 470-ով նախատեսված հանցակազմի իմաստով հարկ է հասկանալ ցանկացած փաստաթուղթ՝ անկախ այն կազմողից, հաստատողից կամ տրամադրողից: Իսկ ներկայացվող փաստաթղթի կեղծ լինելու առումով պետք է հասկանալ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող նյութական կամ էլեկտրոնային այն կրիչները, որոնցում առկա տեղեկատվությունը խեղաթյուրված է, չի համապատասխանում իրականությանը:

– Կեղծ փաստաթուղթ ներկայացնելով անօրինական միգրացիա կազմակերպելու դեպքերում հանցավորի արարքը պարունակում է նաև ՀՀ քր. օր.-ի հոդված 457-ով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Հանցագործությունների համակցությունը, սակայն, տվյալ պարագայում բացակայում է, քանզի անօրինական միգրացիայի կազմակերպումն ավելի խիստ է պատժվում, քան փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը:

– Մուտքի, ելքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ տեղեկություն ներկայացնելով անօրինական միգրացիա կազմակերպելու պարագայում պետք է հասկանալ խեղաթյուրված, իրականությանը չհամապատասխանող ցանկացած այլ տեղեկություն, որը փաստաթուղթ կամ դրա բաղկացուցիչ մաս չէ:

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ ОБЪЕКТИВНУЮ СТОРОНУ ОРГАНИЗАЦИИ НЕЗАКОННОЙ МИГРАЦИИ

Нарек Арутюнян

*Следователь 1-го следственного отдела административных районов
Кентрон и Норк-Мараш следственного управления города Еревана
Следственного комитета РА, советник 3-го класса
narek.har.v@gmail.com
ORCID - 0009-0002-6126-6673*

Статья посвящена изучению некоторых особенностей, которые характеризуют соответствующие признаки объективной стороны организации незаконной миграции, а именно – преступления, предусмотренного статьей 470-ой действующего (нового) Уголовного кодекса Республики Армения.

